

7156

№ 3.

Հովսեփ Ավ. Բ. Տեր-Պետրոսյան

№ 3.

**ՅԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈՒՈՒԹՅՈՒՆ**



ՀՐԱՏ. ՎՐԱՍՏ. ՀԱՅ ԱԶԱՏ ՅԵԿ. ՅԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ

ԹԻՖԼԻՍ — 1926

281

S-50

22.08.2013

№ 3.

ՀԱՎԱՅՔԱԿԱՆ Գ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

№ 3.

ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ

1006
26895

ԲԱՐԵՓՈՒՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅ ԵՋԱՑ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԵՂԱՍԵՐՈՒԹՅԱՆ.

ԹԻՖԼԻՍ — 1926

Հ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ամառվա սկզբին թե՛իս սրբազան առաջնորդը, բժշկվելու համար Կիսլավոդսկ գնալուց առաջ՝ ինձ հանձնարարեց կազմել զեկուցում յեկեղեցու բարեփոխության մասին՝ առաջիկա աշնանը գումարվելիք թեմական պատգամավորական ժողովին ներկայացնելու համար:

16 դարերի ընթացքում հեռոգհեռե կազմակերպվելով՝ հայոց առարեւելան յեկեղեցին Ներկայումս բարեփոխվելու, իր սկզբնական պարզությանը մոտեցնելու վիճակի մեջ է գտնվում: Այսպիսի մի պատկանելի հնություն, 16 դարերի պատմություն ունեցող հայոց յեկեղեցին՝ անհրաժեշտորեն յարեփոխելու աշխատանքը պատասխանատու գործ է, խիստ պատասխանատու: Նա պահանջում է պատմական ընդարձակ, մանրազնին լուսարանություն, թե ինչպիսի պատմական, կրոնական-կենցաղական ետադներ է անցկացրել այդ յեկեղեցին, թե ինչպիսի պահանջների հանդեպ է ցանկացել և ստիպված է յեղել հարստացնել, նույն իսկ խճողել աստվածաշատության կարգը, վորով և խախտել է իր նախկին պարզությունը, աղավաղել է, ուստի և կորցրել է իր նախկին հմայքը:

Աստվածաշատության կարգի հետ իսխտվել ու աղավաղվել է և յեկեղեցու կյանքը, տնտեսությունը, իրավունքը, ավետարանական ղեկավար վոդին ու դարձել է սոսկ աշխարհիկ հիմնարկություն, զուրկ՝ աշխարհիս վրա յերկնքի արքայությունը հաստատելու կարողությունից:

Ու այսպիսի աշխատանքը պահանջում է վնչ միայն պատմական ճիշտ, անսխալ լուսարանություն, այլ և, վոր գլխավորն է, գիտական հիմնավորում:

Հարուստ գրականություն կա, մանավանդ ոտար լիզունքով. այսպիսի մի լուրջ և մեծ աշխատանք կատարելու համար.



սակայն ժամանակը կարճ, անհրաժեշտ գրականությունից միանգամայն կտրված, անհնար եր այդ ուղղությամբ աշխատել: Բայց պետք եր, անհրաժեշտ եր աշխատել և թեմից հավաքվող պատգամավորներին հետաքրքրել մեր յեկեղեցու անցյալ և ներկա կյանքով: համոզել նրանց, վոր յեկեղեցուն վտանգ և սպառնում, յեթև ներկա վիճակի մեջ թողնենք նրան:

Յեթև այս ինձ հաջողվեր, դարձյալ մի գործ կը լիներ, վոր ապարդյուն չեր անցնիլ:

Ահա այս գիտակցությամբ աշխատեցի, ապավինելով իմ հիշողությանս տկար ուժերին:

Յերբ կիսավորակից վերադարձավ նորին բարձր սրբազնություն Տ. Գեորգ յեպիսկոպոսը, աշխատանքս պատրաստ եր. կարգացի մտալ, հետո ինքն ել առանձին կարգաց ու մի քանի ղիտողություններ արավ, վորոնցից յես ոգտվեցի, ախուհետև հետևյալ գրությունն նտացա նորին բարձր սրբազնությունից:

Թիֆլիսի Քամոյան յեկեղեցու ավագ-
յերեց բարձր. Հովս. ավ. ք. Տեր-Պետրոս-
սյանին:

Այսու հրավիրվում եք դուք մասնակցելու վրաստանի թեմի պատգամավորական ժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, վոր տեղի պիտի ունենա ամսիս 4-ից սկսած, իբրև ղեկուցանող հայ յեկեղեցու վարչական, անտեսական և ծխական վերանորոգության հարցի մասին լայն ծավալով, վոր յանձնարարված եր ձեզ իմ կողմից պաշտոնապես՝ հանձնարարելով առաջնորդվել յեկեղեցու նախնական դարերի կյանքով յեվ սկրզքունքներով: Վորպիսի ղեկուցումը կարգացել և ի մոտո ծանոթ եմ և նրա սկզբունքներին ընդհանուր առմամբ հավանություն տվիլ:

Առաջնորդ թեմի՝ Գեորգ յեպիսկոպոս
№ 131.

4 հոկտեմբերի 1925 թ. Թիֆլիս:

Ձեկուցումն ուշի ուշով լսողը և կարդացողը կը համոզվի, վոր յես ամենայն հարազատությամբ հետևել եմ քրիստոնեական յեկեղեցու նախնական գարերի կյանքին և սկզբունքներին:

Հովսեփ ավ. ք. Տեր-Պետրոսյան.

8 հոկտ. 1925 թ. Թիֆլիս:

Զ Ե Կ ՈՒ Ց ՈՒ Մ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ!

Դուք, վրաստանի հավատացյալ հայ համայնքների ներկայացուցիչներդ, հավաքվել եք Թիֆլիսում՝ տնորինելու Ձեր յեկեղեցու վիճակը, հոգալու թեմի բոլոր յեկեղեցիների նյութական-բարոյական կարիքները, սահմանելու և կարգավորելու նրանց իրավական և վարչական կազմակերպությունը խորհրդային ուղենսգրության ծրագրած սահմաններում, սակայն հայոց հնադույն, առաքելական յեկեղեցու հարազատ վոգով:

Այս յերկրորդ թեմական պատգամավորական ժողովն է, սակայն առաջին անգամն և ղեկուցումներ լսվում յեկեղեցու կենսական խնդիրների շուրջը: Պատմական հրամայական մոմենտն և թելադրում ղեկուցանողներին ղրաղեցնել ձեզ՝ սովորական խնդիրներից դուրս և այսպիսի խնդիրներով:

Մենք ապրում ենք պատմական այնպիսի շրջանում, շինարարական, կազմակերպչական, հնի տապալման, նորի ստեղծագործության շրջանում, յերբ դեպքերն ու անցքերը այնպես յեն արագ ընթանում, վոր՝ ով այդ հոսանքին համապատասխան թափով ու արագությամբ առաջ չի ընթանում, չի վերածնվում, նա վոչ միայն հետ ե մնում, այլ՝ յեղաշրջող ու հեղափոխական հոսանքի տակ արորվելով՝ փոշիանում անհետանում է, իրանից հետո հետք անգամ չթողնելով:

Այս ամենը մեր աչքերով տեսնում յենք, մեր ուսերի վրա կրում ենք, յմեր կյանքով ապրում յենք:

Յեկեղեցին այս ընդհանուր իրադարձության մեջ, այս տարերային առաջնադարձության մեջ՝ չի կարող բացառություն կադմել: Մանավանդ սա, յեկեղեցին, մերկացած իր բոլոր իրավունքներից, գույքից, իր արտոնյալ վիճակից, ինքն իրան մենակ թող-

նված, միայն իր ներքին ուշի վրա հենված, պետք է, պարտավոր է, յեթե կամենում է ապրել, ժամանակի հետ առաջ գնալ, թարմանալ, նորոգվել:

Այս է պատմական մոմենտի հրամայական պահանջը: Յեւ Պուր, հարգելի պատգամավորներ, Պուր, վոր Վրաստանի բոլոր անկյուններից հավաքվել եք այս սուրբ տաճարում, հնազանդվելով յեկեղեցու ձայնին, կոչին, ձեր ազնիվ բնազդին, մեծ պարտք եք վերցրել ձեզ վրա, մեծ միսսիա եք հանձն առել:

Այդթենք ուրեմն առ բարձրագույն աստված, վոր ուղարկել մեզ յուր սուրբ հոգու շնորհքը, վորպեսզի մենք բոլորս զորանանք, լցվենք միեւնոյն հավատքով դեպի մեզ առաջադրված գործը, տոգորվենք միեւնոյն սիրով, առաջնորդվենք միեւնոյն իղձերով, զեկավարվենք միեւնոյն իմաստութեամբ ի բարեփոխութեան, ի բարեկարգութեան և ի բարեղարդութեան, ապա և՛ ի հարատեւութեան մեր սիրեցյալ յեկեղեցու՝ Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնի և առաքելական զեկավարութեան ներքո:

Անցնենք ուրեմն այն պայմանների ու գաղափարների լուսաբանությանը, վորոնք մեզ պիտի առաջնորդեն, պիտի հանգեցնեն յեկեղեցու հիմնական բարեփոխութեան անհետաձգելի պահանջին, վորը լիովին բավարարելով միայն հնարավորութեան կտանանք ժամանակի հետ առաջ գնալ, և վորով միջոց կտանք մեր յեկեղեցուն՝ ապրելով զարգանալ և զարգանալով ապրել:

I. Խորհրդային իշխանության տեսակետը յեկեղեցու յեւ կրոնի մասին

Խորհրդային իշխանութիւնը հետևում է մատերիալիստական աշխարհայեցողությանը. նա իր ձեռքի տակ գտնված բոլոր միջոցներով աշխատում է կեանքի մեջ մարմնացնել այդ աշխարհայեցողության գաղափարը:

Գիտական կոմունիզմի հեղինակ Կարլ Մարքսը ասել է. «մարդկութեանը այն ժամանակ կազատվի կրոնական նախապաշարումներից, յերբ կիրականանա սոցիալիստական հեղափոխութեանը, այսինքն՝ այն ժամանակ, յերբ աշխատավոր մարդկութեանը լրջորեն և գործով, իր սեփական ընկալով կը ձեռնարկէ հաստատել զբախտը յերկրիս վրա և վոչ մի կարիք չի զգալ իր հայացքը ուղղելու դեպի թափուր յերկինքը՝ այնտեղ վորոնք լուսնայգի գրախտը»:

Խորհրդային Միութեան գերագույն դատարանի Պրոկուրոր Ա. Կրասիկովը իր՝ «На церковном фронте» գրքի մեջ ասել էր յերեւելով Մարքսի խոսքերը, (յերես 229) ավելացնում է. «Յեկեղեցին պետութեանից բաժանելով, ինչն ըստ ինչյան չէ հետևում, վոր՝ անշուշտ կը վոչնչանա կամ կը թուլանա կրոնական գաղափարի ուշիւր. ընդհակառակը՝ իրականութեանը ցույց է տալիս, վոր բուրժուական իրավակարգի մեջ (շնորհիվ շատ պատճառների) յեկեղեցու բաժանումը պետութեանից նպաստում է կրոնի ազդեցութեան պահպանութեանը»: Ուստի ավելացնում է Ա. Կրասիկովը. «սոցիալիստական հանրապետութեան մեջ՝ անհրաժեշտորեն պետք է հեռացնել կյանքից ամեն կարգի ու գույնի հավատացյալներին»:

Յեւ Խորհրդային իշխանութեանը քայլ առ քայլ դիմում է դեպի այդ նպատակը — դալոցով, մամուլով, դրախտութեամբ, միտինգներով, դասախոսութեաններով, ծաղրանկարներով՝ ամենալավ ագիտացիայով ժողովրդի բոլոր խավերի մեջ:

Այս ընդարձակ ծրագրով յեւտն աշխատանքը մենք տեսնում ենք մեր աչքի առաջ. տեսնում ենք և հետևանքները: Մեր վորդիքը, աճող սերունդը, մեր ձեռքից գնում են. հասուն յերիտասարդութեանը անգամ փոխել և իր ճանապարհը, կարելի չէ ասել, վոր նա եւ մեզ չի պատկանում, դոնե վաղը մերը չի լինի:

Հասակավորների համար եւ միթիթարական չունենք ասելու. նա յեւ անտարբեր է դեպի կրոնը, առնուազն չի հասկացել, չի ըմբռնել՝ թե ի՞նչ է կրոնը. վորն է իսկական կրոնը — աստծո թե սրբերի պաշտամունքը:

Պարզ է, վոր Խորհրդային իշխանութեանը իր ծրագրած նպատակին հասնելու համար մեր իրականութեան մեջ գտել և պատրաստի պարարտ հող իր սերմերի համար և գործանալի չէ, վոր այդ սերմերը հենց մեր աչքերի առաջ առատ պտուղ են տալիս — մեկին 50, մեկին՝ 100, 200, 300... և ավելի, և յեթե մեր կողմից նույնպիսի ծրագրով լուրջ աշխատանք գործ չգրվի դրութեանը փրկելու համար, չի անցնիլ մի քսան — յերեսուն տարի, նրանք կհասնեն իրենց նպատակին:

Մենք զրկված չենք այդպիսի աշխատանքի հնարավորութեանից. Խորհրդային իշխանութեանը մեզ տվել է խղճի կատարյալ ազատութեան. նա թույլ է տվել ազատ, ինչպիսի հակաիրոնական, այնպես և կրոնական ագիտացիան, աշխատանքը: Ամեն ժարդ ազատ է՝ հավատալ աստծուն, ինչպես ինքն է հասկանում,

կամ բոլորովին չհավատալ նրան, և հետեւելով իր խղճի թելադրանքին, այնպես գործել:

Թե ինչպես, ինչ ճանապարհով պետք է փրկենք զրությունը, այդ մեզ համար պարզ կլինի, յերբ կուսումնասիրենք Խորհրդային իշխանության իրավական ըմբռնումը յեկեղեցու մասին:

Խորհրդային իշխանությունը յեկեղեցին բաժանել է պետությունից, դպրոցն էլ բաժանել է յեկեղեցուց, ուրեմն՝ յեկեղեցուց վերցրել է քաղաքական և կուլտուրական ֆունկցիաները: Յեկեղեցին չունի և իրավաբանական անձի իրավունք, չունի սեփական գույք, կալվածքներ, վորեն արդյունաբերություն: Ինքը — յեկեղեցին, վորպես գույք, վորպես կալվածք, պետական սեփականություն և դարձել և գտնվում է տեղական իսպոլկոմների անմիջական հսկողության տակ: Մի յեկեղեցու շուրջը համախմբված միևնույն դավանության պատկանող համայնքը իրավունք է ստանում իսպոլկոմից՝ ծրիադար ոգտվելու յեկեղեցով և նրա անհրաժեշտ իրերով՝ հաստատված ցուցակով և պարտադիր պայմանագրով համայնքի ներկայացուցիչների հետ: Յեկեղեցու անտեսական, վարչական և դատաստանական ֆունկցիաները վերապահված են համայնքներին. իսկ յուրաքանչյուր համայնքի գործադիր մարմինն է՝ ծխական կամ յեկեղեցական խորհուրդը, վորի անրաժան անդամն է համարվում յեկեղեցու տվագ — յերեցը կամ տվագ քահանան՝ իր պատմական իրավունքներով:

Այսպիսով՝ ինքնիրեն վերականգնվում է յեկեղեցու նախնական համայնական ցանկալի իրավակարգը:

Ինչպես տեսնում եք՝ Խորհրդային իշխանությունը յեկեղեցին տվել է հավատացյալ համայնքին, ուրիշ վոչ վորի չե ճանաչում իր սահմանադրությամբ, բայց՝ հաղթվելով կյանքի թելադրանքների, պետություն կազմող ժողովուրդների կամ ազգությունների հավատացյալ մեծամասնության իրավունքների հետ՝ խղճի կատարյալ ազատության որինակացած սկզբունքի հետևանքով, տանում է, չեմ ասում ընդունում է՝ միևնույն դավանության յեկեղեցիների միությունը հոգևոր պետի գլխավորությամբ և նրա ոգնական առաջնորդների գործակցությամբ:

Ըստ այսմ իրավունք ենք ստացել գումարել թեմական պատգամավորական ժողովներ՝ թե Խորհրդային Միության առանձին հանրապետությունների և թե համառուսական ծավալով: Այդ պատգամավորական ժողովները ընտրում են իրենց գործադիր մարմիններին — թեմական յեկեղեցական խորհուրդներ՝ թեմի համայնքների

գործունեյության վրա հսկողի դերում, և նրանց նախագահ՝ թեմական առաջնորդներին: Իսկ համառուսական, մեր իրականությամբ՝ համազգային պատգամավորական ժողովը ընտրում է իր գործադիր մարմինը և նրա նախագահ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ նույնպիսի ֆունկցիաներով բոլոր թեմերի գործունեյության նկատմամբ:

Սակայն չպետք է համոզվենք, վոր Խորհրդային իշխանությունը յեկեղեցու այս սահմանափակ վիճակը ընդունում է վորպես մնայուն իրավակարգ իր՝ Խորհրդային հիմնարկների շարքում, վոչ, հարգելի պատգամավորներ, այլ այս դրությունը համարում է, ընդունում է վորպես փոքրագույն չտրիք ժամանակավորապես տանելի, մինչև վոր ժողովրդական մասսային և իր ծրագրով ու իր ձեռքի տակ կրթվող սերնդին կվարժեցնի վերջնականապես հեռանալ, ոտարանալ և կրոնից և յեկեղեցուց:

Վորովհետև՝ Խորհրդային իշխանությունը՝ կրոնը և յեկեղեցին համարում է ֆրասակար հիմնարկներ, ժողովրդի միտքը և հոգին մթազնող դադափարներ:

Այժմ պարզ է ուրեմն՝ թե զրությունը փրկելու համար ինչպիսի աշխատանք պիտի գործ դնենք:

Զինվելով խղճի կատարյալ ազատության իրավունքով, աշխատենք, վոր գորանա, կենդանանա կրոնը, թարմանա, մաքրվի ու կազդուրվի, նոր ուշժ, նոր կյանք ստանա յեկեղեցին և հավիտյան ապրելու հաստատուն գրավական ձեռք բերի:

II. Նախնական քրիստոնեական յեկեղեցին

Քրիստոս համբառնալուց առաջ այսպես պատվիրեց աշակերտներին. «Գնացեք այսուհետև աշակերտեցեք զամենայն հեթանոս», մկրտեցեք զնոսա հանուն Հոր և Վորդո և Հոգվույն Սրբո: Այսպես էլ վարվեցին առաքյալները. ցրվեցին առաջավոր Ասիայի բոլոր կողմերը, մանավանդ Փոքր Ասիա, Հայաստան, Հունաստան և Հռոմ և քարոզեցին Քրիստոսի ավետարանը:

Յերկնքի արքայության ավետիքը, Քրիստոսի կյանքը, քարոզությունը, հրաշքները, մատնությունը, խաչի վրա մեռնելը, յերրորդ ուրբ հարություն առնելը, համբարձումը, հոգեզալուստը՝ նորություններ, գրավիչ նորություններ էյին հեթանոս աշխարհի համար՝ հեթանոսական կրոնի անկման շրջանում: Յե՛վ առաքելական քարոզությունները հետաքրքիրների ահագին բազմություն եր

գրավում ժողովրդի բոլոր խավերից. շատերը հավատում էին, ուստի և կազմակերպում էին հավատացյալների խմբակներ — բլիժներ:

Ահա այս բլիժներից կազմվեցին, առաջ յեկան քրիստոնեական համայնքներ — քրիստոնեական յեկեղեցին: Այդ համայնքներ — յեկեղեցիները մի-մի մեծ ընտանիքներ էին՝ անդամների հավասար իրավունքներով՝ վորպես յեղբայրք ի Քրիստոս Հիսուս:

Համայնքի գույքը ընդհանուր էր. առանձին սեփականություն չկար. հասարակաց սեղանից էին կերակրվում. համայնքի տնտեսականը կառավարում էին ընտրյալ սարկավազները. ունեյին և քարոզիչներ, քահանաներ, յեպիսկոպոսներ՝ իրրե վարչական պաշտոնյաներ, սակայն համայնքի անդամներից վոչնչով չէին զանազանվում. նրանց հետ հավասար աշխատում էին. միևնույն տարազն ունեյին, միևնույն նիստ ու կացն ունեյին:

Առանձին գասակարգ չկար նրանց մեջ:

Շաբաթը մեկ անգամ, սովորաբար շաբաթ յերեկոյանները, հավաքվում էին հասարակաց աղոթքի հավատացյալներից մեկի տունը, կամ սովորական դարձած աղոթքի տեղերում, վոր ապագայում յեկեղեցի կոչվեց: Նախ բոլորը միասին յերգում էին մի հոգևոր յերգ, ավետարանային գաղափարներն արծարծող յերգ, ապա տեղի յեր ունենում զրույց Քրիստոսի կյանքի և գործերի մասին, հետո աղոթում էին, շատ անգամ աղոթում էր մի մանուկ, վորին խորասուզված, գլխակոր լսում էին ամենքը. հետո՝ մեկն ու մեկը, ով կարող էր, ընդունակ էր, քարոզում էր, բնաբան վերցնելով հին կտակարանից, Մեսսիային վերարեղյալ մարգարեական գրքերից, ապա՝ դարձյալ խմբովին յերգ. իսկ ամենից վերջը տեղի յեր ունենում ընկումն հացի. համայնքի ավագներից մեկը որհնում էր հացը և գինին ու բաժանում համայնքի անդամներին ի հիշատակ խորհրդավոր ընթերցի, ինչպես պատվիրել էր Փրկիչը. «Ամեն անգամ, յերբ կը կամենաք ինձ հիշել, այսպես արեք դուք»: Յեվ այսպես անխափան ամեն շաբաթ յերեկո անելով՝ նախնի քրիստոնյա համայնքները մխիթարված, վոր Տիրոջ ընթերցին արժանացան, ցրվում էին իրենց տները:

Նախնի քրիստոնեությունից աղոթքներից մեկի մեջ այսպես էր ասված. «Ինչպես վոր այս կտրված հացը ցրված էր բլուրներ ի վրա և այժմ հավաքված՝ մի յե դարձել, թող այնպես էլ քո յեկեղեցին յերկրի ծայրերից հավաքվի քո արքայության մեջ»: Այս աղոթքը հավանորեն արտասանում էին հացի բեկման ժա-

մանակ, վորի նպատակն էր կապ պահպանել հավատացյալ համայնքի անդամների միջև:

Մկրտում, պսակում, թաղում էին շատ պարզ. — յերգ, կենդանի խոսք, աղոթք, ապա համայնքի ավագագույն անդամը ամենասուրբ երրորդություն անունով խաչակնքելով վերջացնում էր:

Այս յերեք նվիրական անուններով սահմանափակվում էր հավատո հանգանակը, քրիստոնեական ամբողջ դավանանքը:

Նախնական քրիստոնեական յեկեղեցին աստվածաշունթյան կարգը — հասարակաց աղոթքը կատարում էր շաբաթը մեկ անգամ, շաբաթ յերեկոները. մնացած որերը համայնքի բոլոր անդամները անխտիր աշխատանքի մեջ էին:

III. Հայոց առաքելական յեկեղեցին անցյալում:

Հայոց յեկեղեցին հիմնել են Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները Միջագետքի Մծբին քաղաքում, ապա և միջին Հայաստանում՝ առաջին քրիստոնյա թագավոր Արգարի փրկչին ուղղած նամակի հետևանքով՝ առաջին դարում: Բայց Արգարի մահից հետո հեթանոսությունը գլուխ բարձրացնելով՝ կատաղի հալածանքի յե յենթարկվում Քրիստոսի յեկեղեցին, սակայն առաքյալների ցանած սերմերը չեն վոչնչանում, ու յեկեղեցին շարունակում և ապրել, բայց ծածուկ, գետնափոր տեղերում, քարանցավներում, կամ առանձին, հեռավոր՝ անվտանգ տեղերում՝ մինչև սուրբ Գրիգոր լուսավորիչ, վորի որով յեկեղեցու պատկերը բոլորովին փոխվում է:

Այդ ժամանակ թե արևելքում, թե արևմուտքում բավական ձևափոխվել էր, կազմակերպվել էր, արդեն հրապարակ էր դուրս յեկել և մաքառում էր հեթանոսության հետ: Միևնույն ժամանակ՝ անգգալիորեն թե գիտակցաբար հետզհետե հեթանոսական կրոնից և հին ուխտի յեկեղեցուց փոխ էր առնում և արտաքին փայլ, և զգեստներ, և սովորություններ, նույն իսկ ծեսեր ու արարողություններ, հարկավ քրիստոնեական գույն ու բովանդակություն տալով նրանց, վորպեսզի կարողանա հավատացյալ մասսային գրավել իր կողմը:

Քրիստոնեությունը անխուսափելիորեն մրցություն մեջ էր ժողով հեթանոսության հետ:

Ահա այս պայմանների մեջ՝ Հունաստանում և Հռոմում սընված ու կրթված Գրիգոր Պարթևը Հունաստանի վրայով Հայաս-

տան և գալիս Հոռմից և Հայաստանի ընդհատակյա (подпольный) քրիստոնեությունը լույս աշխարհ և հանում, քաղաքացիություն և տալիս նրան, ամբողջ Հայաստանը կարճ միջոցում, կարծես մի դյուրեկան գավազանի հարվածով, քրիստոնյա յե դարձնում վնչ լոկ քարոզությանը, այլ զենքի ույծով, հավատացյալ Տրդատ թագավորի և նրա նախարարների գործով աջակցությամբ:

Այսպիսով՝ առաքելական-համայնական յեկեղեցին պետականացավ Հայաստանում:

Ս. Գրիգոր Լուսավորիչը իր հետ բերեց հույն և ասորի կրոնավորների ահագին բազմություն: Այս ոտար պաշտոնյաները յեղան հայոց յեկեղեցու հիմնադիրները: Յեվ վորովհետև հայերը սեփական գրեր չունեին, աստվածպաշտությունը կատարվում էր ոտար լեզուններով. ս. գիրքը և ավետարանը կարդացվում էին ոտար լեզվով. քարոզը խոսվում էր ոտար լեզվով: Հասկանալի է, թե ի՞նչ սոսկալի տանջանք էին կրում թեկուզ հայ կրոնավորները, վորպեսզի կարողանային կարդացածները թարգմանել ու հասկանալ հեթանոսամիտ հայ հավատացյալներին:

Ավետարանը ոտար լեզվով, ժամատացությունը ոտար լեզվով, քարոզը մեծ մասամբ ոտար լեզվով, ուրեմն՝ ժողովրդին միանգամայն անհասկանալի. հետևարար անհասկանալի և անմարսելի էին հայ հավատացյալների համար և ավետարանը և քրիստոնեական կրոնի վնչ գաղափարները:

Այս, յեթե կարելի յե այսպես ասել՝ հավատի կրիզիսը մեղմացնելու ցանկությունը ս. Լուսավորիչը՝ սրտես քաղաքացիների հեռատեսությամբ՝ հեթանոսական տաճարները փոխարկեց քրիստոնեական տաճարների, գմբեթների վրա խաչ զննելով. հեթանոսական տոների տեղ՝ քրիստոնեական—տերունական տոներ նշանակեց, քրմերի վորդիներից քահանաներ պատրաստեց, ու միևնույն տաճարներում, միևնույն հանդիսավորությամբ և համարյա միևնույն կազմով—շտատով՝ քրմերի վորդի քահանաներով շարունակվում էին՝ աստվածպաշտությունը, տոները, ծեսերն ու արարողությունները՝ քրիստոնեության անվան տակ՝ մոտ հարյուր տարի մինչև գրերի գյուտը:

Գրերի գյուտը նոր դարաշրջան և սկսում հայոց պատմության մեջ՝ ընդհանրապես, կուլտուրայի և քրիստոնեական կրոնի և յեկեղեցու պատմության մեջ՝ մասնավորապես: Մեսրոպի և Սահակի յեռանդուն աշխատությամբ բացվում են բազմաթիվ դղյրոցներ, պատրաստվում է նոր, մաքուր հայ սերունդ. ստեղծվում

և հարուստ գրականություն: Թարգմանվում են մայրենի հասկանալի լեզվով՝ ավետարանը, ս. գիրքը, կազմվում են հասկանալի լեզվով աստվածպաշտության հատուկ կարգ, մաշտոց, տոնացույց. յորինվում են շարականներ, տաղեր, հոգևոր յերգեր...

Այս մտավոր և հոգևոր հեղաշրջումը կատարվեց հինգերորդ դարում, վոր իրավամբ կոչվում է վոսկե դար:

Հինգերորդ դարում միայն մենք ունեցանք մաքուր ազգային յեկեղեցի, վոր տվեց Վարդանանց և նրանց հաջորդող փառավոր սերունդներ:

Սակայն այս վոսկե դարը յերկար չտևեց. վեցերորդ, յոթներորդ և հետագա դարերում՝ քաղաքական կյանքի թուլանալու, բաժանվելու, ազա և վերանալու շրջանում՝ մի կողմից վոսկեդարյան գրաբառ լիզուն հետզհետե աղավաղվում, նեմանում է, աշխահիկ լեզվի նշաններ են առաջ գալիս, մյուս կողմից՝ յեկեղեցու հայերը աստվածպաշտությունը հետզհետե հարստացնում են նորանոր շարականներով, յերգերով, տաղերով և փոխառած ծեսերով, արարողություններով և ազդեցությամբ—ավետարանական կենդանի խոսքի թուլանալու հետևանքով:

Քաղաքական կյանքի վերացումով առաջ յեկան մանր իշխանություններ, թագավորություններ, մեկը մյուսից անկախ, վոմանք ոտոր բռնակալների, վոմանք հայ իշխանների կառավարության տակ, մեկը մյուսին թշնամի: Այդ միջոցներում պատմության մեջ ասպարեզ և գալիս Մահմեդի նոր կրոնը, վոր հրով և սրով տարածվում է և հայաստանում տեղի են ունենում հերոսական կոիթներ հավատի պաշտպանության համար: Հայոց և ընդհանուր քրիստոնյա յեկեղեցին այս անվերջ կոիթների մեջ ունեցան նահատակների անվերջ շարք, սրբակյաց կրոնավորներ, յեկեղեցու հայրերի, ճգնավորների մեծ բազմություն: Ժամանակի վոզին պահանջ զգաց հարգել այդպիսիների հիշատակը, վոր սակայն, դժբախտաբար, ժողովրդական մասսայի տգիտության շնորհիվ, հետզհետե, դարերի ընթացքում փոխվեց վնչ միայն սրբերի, այլ և նրանց մասունքների պաշտամունքներին, նրանց հատուկ տոնակատարություններով ու սնտիապաշտական ծեսերով, վորոնք միանգամայն հակասում յեն ավետարանի վոզուն ու գաղափարներին:

Վերականգնել սրբոց հարգանքի մաքուր գաղափարը ներկայումս միանգամայն անհնարին է՝ այնքան խոր արմատներ և զցել ժողովրդական հավատալիքի մեջ նրանց և նրանց մասունքների պաշտամունքը:

IV. Պոլոմենիա յեվ արդի հայոց յեկեղեցին

Դ. զարից սկսած քրիստոնեական համայնական յեկեղեցին պիտական իմնարկ դարձավ ու հետզհետե սկսեց խոնարհվել կայսր-ներին, թագավորներին առաջ, նրանց հլու կամակատարել լինելի. թեև յեղան ժամանակներ, յերբ յեկեղեցու պետերը, որինակ Հռոմի պապերը, իշխում եյին, հրամայում եյին կայսրներին, հանդիսա-նալով կայսրների կայսր. բայց այդ շրջանը շուտ տեղի տվեց կայսրների հզորությանը և յեկեղեցին, փոխանակ առ ինքն կո-չիլու բոլոր վաստակյալներին ու բեռնավորներին և նրանց հան-գասություն տալու, ինքը ծանրացավ նրանց վրա և քակեց ծա-ռայել յերկրիս մեծամեծների և հզորների շահելին:

Այս ընդհանրապես:

Արդարությունը պահանջում և հոգուտ հայոց յեկեղեցու խոստովանվել, վոր հայկական իշխանության, մանավանդ Հայաս-տանի անիշխանության ժամանակ, մինչև ուսաների տիրապետու-թյունը, հայոց յեկեղեցին, պետական լինելով հանդերձ, ավետա-րանական համայնական անկախությունը պատվավոր կերպով պա-հել և. ճշմարիտ և՛ աստվածաշատության կարգը հետզհետե յե-կամուտ, ոտար տարրերով հարստացել-խճողվել և, նախնական պարզությունը կորցրել աղավաղվել և, բայց մնացել և միշտ ժո-ղովրդական և ժողովրդավարական. ազգային և ժողովրդական թշվառությունների ժամանակ իր հոտի իսկական հայրն և յեղել, բաժանելով նրա հետ և հալածանքը, և վիշտը, և տառապանքը, և ուրախությունը և բարորությունը: Հայ հոգևորականությունը ընդհանրապես, կուսակրոնությունը մասնավորապես՝ պատմական-կուլտուրական անուրանալի դեր և կատարել. հայ վանքերը մի-մի զպրոցներ են յեղել, ուր ծաղկել, պահպանվել և հայ զպրու-թյունը:

Դրությունը փոխեց ոռոսաց տիրապետությունը ԺԹ զարի սկզբում: Ռուս տերությունը տիրելով Հայաստանի կարևորագույն մասին՝ ամենայն հայոց կաթողիկոսի աթոռի հետ միասին, վճռեց այդ յեկեղեցին՝ իր մայր աթոռի միջոցով իր հզոր ձեռքի մեջ տեղմել՝ գրանով դեպի հեռու, դեպի Միջերկրական ծովը իր ազ-յեցությունը տարածելու քաղաքական հեռատեսությամբ, Հայաս-տանը առանց հայերի գրավելու նենգ քաղաքականությամբ:

Այդ նպատակով ոռու կառավարությունը հայոց յեկեղեցուն տվեց նոր որենք—պոլոմենիան, վորով խեղդեց հայ ժողովրդավա-րական յեկեղեցու ազատ, համայնական վոգին:

Ճշմարիտ և՛ ըստ առաջնության ամենայն հայոց կաթողիկոսը ընտրվում ևր համազգային ժողովում, սակայն՝ փոխանակ մեկի, յերկու թեկնածուներ եյին ընտրվում, վորոնցից մեկին հաստա-տելու իրավունքը պոլոմենիայով վերապահված ևր ոռուաց կայս, ին. կաթողիկոսը ևր համայն հայոց կաթողիկոս, բայց նրա ընտրու-թյունը հաստատում ևր միայն ոռուաց կայսրը. մյուս պետու-թյունները, վորոնց սահմաններում գոյություն ունեյին հայ թեմեր, կաթողիկոսի հաստատության խնդրում ձայն չունեյին, կարծես շահ ել չունեյին միջամտելու:

Հաստատվելուց հետո ամենայն հայոց կաթողիկոսը իր բնա-կության վայրից նախ պիտի գնար Պետրբուրգ, ներկայանար ոռուաց կայսրին, հավատարիմ ռպատ կոթյալ հովաստիա-ցումն տուր յերկուսով, ապա գնար ս. Եջմիածին՝ և ոծվեր. ոռու պետության համար ամենայն փուլթ չեր, թե այդ ոծումը տեղի յեր ունենում մեծ ու շքեղ հանդեսով, վորին ներկա յեր լի-նում և ոռու կառավարության ներկայացուցիչը:

Առաջնորդների ժողովրդական ընտրությունը բոլորովին վերջացավ. կաթողիկոսն ևր թեմական առաջնորդը ընտրում, դար-ձյալ յերկու թեկնածու և կայսեր բարեհաճ հաստատությանը ներկայացնում, վորին նա կը կամենար:

Յեկեղեցու բարձրագույն կառավարությունը հանձնվեց Սի-նոդին, բաղկացած յեպիսկոպոսներից և վարդապետներից՝ դար-ձյալ կաթողիկոսի ընտրությամբ և յերկ-յերկու թեկնածուներով և ներկայացվում ևր կայսեր հաստատությանը: Իսկ Սինոդին ուղղություն տվողը յեղավ կառավարությունից նշանակված պրո-կուրոր՝ իբրև որենքի ճիշտ գործադրության հսկող. նա յեր հա-տատում-վավերացնում Սինոդի որագրությունները, առանց վորի վնչ մի վճիռ, վնչ մի վորոշում չեր կարող գործադրվել:

Ամենայն հայոց կաթողիկոսը և Սինոդը գտնվում եյին պրո-կուրորի գերիշխանության տակ. հայոց յեկեղեցու կառավարիչը և իսկական պետը պրոկուրորն ևր և վնչ ամենայն հայոց կաթողիկոսը:

Կայսեր և կայսերական տան բոլոր անդամների անունները պատարագի մեջ հիշատակվում եյին կաթողիկոսից առաջ: Կայ-սերական տոները շքեղ հանդեսներով և մաղթանքներով կատարվում եյին հայոց բոլոր յեկեղեցիներում:

Հայոց յեկեղեցին բոլորովին դարձավ կայսերական հիմնարկություն՝ և ձևով և վոզով:

Քանիցս ռուս կառավարությունը ցանկություն է հայտնել, վոր Սինոդը իր ամբողջ կազմով, ամենայն հայոց կաթողիկոսի հետ միասին, ռոճիկ ստանան պետական գանձարկղից, այնպես և քահանայական դասը, վորով ամբողջ հայ հոգևորականությունը ռուս պետության չինովնիկներ կդառնային, սակայն այդ չի հաջողվել նրան:

Ամենայն հայոց կաթողիկոսի հովուական կոնդակները և Սինոդի կարգադրությունները, ուղղված արտասահմանի հայությունը և հայ պատրիարքներին, տեղ ելին հասնում ռուսաց արտաքին գործոց նախարարության պաշտոնություն միջոցով: Հասկանալի չե՝ թե ինչ վուգի և ինչ բովանդակություն կունենային այդպիսի գրություններն ու կոնդակները:

Կուսակրոն հայ հոգևորականությունը, վոր մինչ պոլոժենիան ռւստյալ վանական էր, պաշտոնական-վարչական բնույթ ու ֆունկցիաներ չունեի, պոլոժենիայով հրապարակ յեկավ վորպես յեկեղեցու և տնտեսական, և վարչական և դատաստանական գործերի լիակատար տեր ու տնօրեն:

Այստեղից և սկիզբն առնում հայ կուսակրոն հոգևորականության անսահման իշխանությունն ու հեղինակությունը հայ ժողովրդի և մանավանդ հայ քահանայության վրա:

Պետական օրդենները հրաշագործ միջոցներ ելին՝ հայ կուսակրոն հոգևորականությունը պետության հետ կապելու, պետության հյուս, հնազանդ, անձնվեր գործիքը դարձնելու համար:

Մի ամբողջ դարաշրջանում պոլոժենիան հիմքից փոխեց հայի ազատ, յեկեղեցական-համայնական վոգին: Պոլոժենիան յեկեղեցու մեջ կրթեց ու զարգացրեց միահեծանություն, բռնակալական վոգի, վորի տիպիկ ներկայացուցիչն է ներկայանում այսօր մեր կուսակրոն հոգևորականությունը, նախկին ռւստյալ վանականը:

Նրանց պաշտոնական գրությունների մեջ չեք պատահի «խնդրում ենք», «առաջարկում ենք» արտահայտությունների, այլ միայն՝ «պատվիրեմք», «առաջադրեմք», ձիշտ՝ «приказываю, предписываю» խոսքերին: Յեվ խեղճ ու կրակ հայ ժողովրդական քահանան կարող էր չկատարել նոգեվոր իշխանություն պատվերները, հրամանները, առաջադրությունները: Վոչ միայն անհնազանդության, այլ և առարկության դեպքում՝ պատրաստ ելին

նրա համար՝ Սեան, գեղարդ, խոր-վիրապ և այլ վանքեր: Թող նրանց ընտանիքները քաղցած մնային, վորդիքը՝ փողոցում, ինչ փուլթ անսիրտ, անհոգի կուսակրոնի համար:

Կոնսիստորիաների և Սինոդի գրությունները, նույն իսկ հոգևոր կառավարությունների գրությունները սկսվում ելին по указу Его Императорского Величества սարսափ աղդող նախադասությամբ:

Ամուսնացած, աշխարհիկ հայ հոգևորականությունը, ժողովրդի ընտրյալ քահանայությունը, մնալով սոսկ ծխակատար, զուրկ նախաձեռնող վոգուց և իր ասպարեղում առաջ գնալու հնարավորությունից, վարդապետական վեղարից ել ցած մնաց, հետևաբար, նրա կյանքը, տնտեսականը, մանավանդ իրավականը վնքե ուղադրությունից զուրկ: Ավելին կասեմ՝ քահանան պոլոժենիական վեղարավորների առաջ անլեզու, կամազուրկ ստրուկ էր, սպասավոր էր, մինչև իսկ նրա անձնական ծառան:

Յեվ այսպես՝ պոլոժենիան հայ յեկեղեցում զարգացրեց, կազմակերպեց՝ անսիրտ, անհոգի բյուրոկրատյա, յեկեղեցական նվիրապետությունը, ավետարանական, համայնական — ժողովրդական յեկեղեցու վոգուն խորթ յեկեղեցական պետությունը, իսկ և իսկ կայսերական կառավարության վարչական կազմակերպության ձևով ու վոգով՝ պաշտոնյաների ուրույն, շատ տեղ աչք ծակող հոգևորական տարագով և շլացնող օրդեններով: Յեկեղեցին իր նվիրապետությամբ դարձավ միահեծանության գաղափարի պաշտպան ու ջատագով, նրա հյուս գործիքը, և հակառակ Քրիստոսի պատվերին՝ «տալ զկայսերն կայսեր զԱստծուն Աստուծո», ամբողջովին նվիրվեց, անձնատուր յեղավ կայսրությանը, իսկ Աստծուն վոչինչ չտվեց, բաժին չթողեց:

Ահա այս և արդի յեկեղեցին, ավետարանի, Քրիստոսի սիրտ վարդապետության իսպառ աղավաղած յեկեղեցին իր՝ հեթանոսարար կազմակերպությամբ և բնույթով: Իսկ աստվածապաշտության կարգը միանգամայն համապատասխանում և յեկեղեցու նվիրապետության փառասիրական և իշխանատենչ ձգտումներին, վոր ժողովուրդը վոչինչ չհասկանա, վոչինչ չպահանջի, այլ միայն տա...

Արդ՝ յեկեղեցին մեռած, անկենդան դիակ և դարձել. աստվածապաշտությունը անհրապույր, ժողովրդին անհասկանալի, յեկեղեցու սպասավորությունը, սրբազնագործ պաշտոնյությունը անպատրաստ, անգիտակից իր հովվական պաշտոնին ու կոչու-



մին, մեծ մասամբ տգետ, նույնիսկ անգրագետ, և վնչ միայն անգրագետ եր, այլ, թույլ եմ տալիս ինձ ասել՝ և անհավատ. այո, անհավատ: Քանի՜ քանիսը հանեցին վերարկուն, հայհոյեցին և կրոն և յեկեղեցի ու հեռացան:

Յավալի յե, չե:

Պլոժենյայով հզորացած՝ յեկեղեցու նվիրապետութեան հաղաթ ծնունդն և այս քահանայութիւնը: Յեւ մեծ մասամբ այս տիպի քահանայութիւնն է յեղել և է մեր կուսակրոնութեան և մերձավորը և աշակիցը և փայլալիւծը...

Ուստի և՛ հավատացյալ հայ ժողովուրդը հետզհետեւ ստուել և իր յեկեղեցուց, թուլացել և նրա կրոնը, հավատքը, դարձել և հակակրոնական, նույն իսկ անկրոն, անհավատ:

Յեկեղեցու վեհ գաղափարով, ավետարանի կենդանարար փոփոխութեամբ սիրտն և այս խոսքերն ասում, և հավատացած եմ, վոր դուք ամենքդ, յարգելի պատգամավորներ, վոր Վրաստանի բոլոր անկյուններից, վորտեղ հայի սիրտ և բարախում, հավաքվել եք այս բաղնիքային ու շնչասպառ տաճարում՝ նոր վոգի ու շունչ պարգեկելու սրտն, ինձ հետ միասին պետք է պընդեք, վոր անհրաժեշտ և որ առաջ վերակենդանացնել, նոր կյանք, նոր վոգի, նոր ուշժ տալ սրտն, վոր կենդանիա ու ապրի և շարունակե կատարել իր պատմական դերը — սիրոյ, յեղբայրութեան և հավասարութեան ավետիքը քարոզել և յերկնքի արքայութիւնը, արդարութեան արքայութիւնը հաստատել յերկրիս վրա:

Յեւ այս հարավորութեանը ձեզ տրված է այսօր, հարգելի պատգամավորներ. պոլոժիւյան ծնունդ և յեկեղեցական հակաքրիստոնէական նվիրապետութիւնը մեզ տվող ուսական միահեծան ինքնակալութեան փորը խորտակող մեծագույն հեղափոխութիւնը՝ յեկեղեցին պետութիւնից բաժանելով՝ վերականգնել և հայց ժողովրդավարական յեկեղեցու նախնական պարզ իրավակարգը. յեկեղեցին բոլորեղացիութեւ, առաքելական ազատ վիճակին վերակոչելու բոլոր պայմանները տվել է մեզ:

Ուրեմն հայ յեկեղեցու ապագա բախտը տնտեսական իրավունքը այսօրվանից քո ձեռքին է, հայ ժողովուրդ, կամենում յես փրկել զրութիւնը. ոգավիր քեզ տված իրավունքից:

V. Յեկեղեցական բարեփոխութեան գաղափարի անցյալը

Յեկեղեցու բարեփոխութեան խնդիրը կես դարից ավելի պատմութիւն ունի մեր մեջ, մասնավորապես ուսահայաստանում:

Այս կարիքը զգացել և զգալ և տվել հայ հասարակութեանը, մասնավոր հայոց հոգևոր իշխանութեանը՝ Ստեփաննոս Նազարյանցի «Հյուսիսափայլ», ապա՝ Գրիգոր Արծրունու «Մշակը»: Թե ամսագիրը և թե մասնավոր որակները անագին շարժում առաջ բերին հայ հասարակութեան մեջ. յերևան յեկեղեցի և դեմ մտածողներ ու քննադատներ, համակրողներ և հակառակորդներ, յերկու թշնամի բանակներ — ազատամիտ և պահպանողական՝ թե կյանքի և թե մամուլի մեջ:

Պահպանողականների թե ու թիկունքն եր մայր աթոռ ս. Նշմիածինը իր կուսակրոն միաբանութեան և նրա հլու հպատակ քահանայութեան ստվար մասով: Պահպանողականների որդաններն էին՝ «Արարատ» պաշտոնական ամսագիրը և «Մեղու» ու «Նոր-Դար» թերթերը:

Ազատամիտների, ավելի ուղիղը՝ մշակականների բանակը կազմում եր թարմ յերիտասարդութիւնը և ինտելլիգենցիայի ստվար մեծամասնութիւնը:

Պահպանողական մեղուականներն ու նոր-դարականները մշակականներին անվանում էին անաստված, անկրոն, անհավատ, ազգի ու յեկեղեցու թշնամի: Յեւ իրրեւ այդպիսիների, հոգևոր իշխանութիւնը իր արբանյալներով ամեն կերպ աշխատում եր դպրոցները մաքրել նրանցից, կամ մոտ չթողնել դպրոցին. դպրոցական հոգաբարձութիւնների, մասնավոր թեմական դպրոցական-հոգաբարձութիւնների ընտրութեան ժամանակ անագին պայքար եր առաջ գալիս յերկու բանակի մեջ, եւ առավել կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ: Այդ տեսարանների ու պայքարների ակնատեսներ և մասնակիցներ դեռ շատ կան ժամանակակիցներիս մեջ: Ուրեմն՝ մի 25 — 50 տարի առաջ մեր հոգևոր իշխանութիւնը յսկ անգամ չեր ուղում վարեւ բարեփոխութիւն մեր յեկեղեցական կյանքի մեջ: Պատգուների բերանների փակելու բոլոր և նորանոր, նույն իսկ որինական միջոցն ունեւ հայոց հոգևոր իշխանութիւնը:

Սակայն 1905 թվից զրութիւնը տնտեսական փոփոխից, վոր փակ լեզուները բացվեցին, սկսեցին պահանջներ առաջադրել նույն իսկ միահեծան կայսրութեանը: Իսկ 1917 թ. հեղափոխութիւնը բոլորովին փոխեց պատկերը: Յերկրագնդիս 1/6-ը կազմող ուսական մեծ պետութիւնը կատարյալ ինքնորոշման և ազատ ու անկաշկանդ զարգացման իրավունք տվեց իր իշխանութեան տակ գտնվող բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

Բնական է՝ վոր այդ ազատութիւնից պետք է ողորդել և յեկեղեցին, ուրեմն և հայոց յեկեղեցին:

Ուստի նվաստ, ձեր խոնարհ ծառան, տողորված յեկեղեցական անհետաձգելի բարեփոխութեան պաղափարով՝ նախաձեռնութիւն հանձն առա քահանայական ընդհանուր ժողով գումարել և 13 հոգիւմից բաղկացած թեղիսներով բացատրել թե ի՞նչ պետք է անել Թիֆլիսի հայ քահանայութիւնը ներկա պատմական ընդհանրութիւն (16 մարտի 1917 թ.):

Զնայելով, վոր ժամանակի առաջնորդ Մխիթար յայրսկոպոսը իր փոքրածիւղ արքայականութեամբ ամեն կերպ աշխատում էր հետ կասեցնել քահանայութիւնը այդ շարժումից, սակայն վողեւորութիւնը այնքան մեծ էր, վոր գուտ քահանայական ժողովները փոխվեցին Թիֆլիսի հոգաբարձութիւնների, յերեցփոխների և քահանաների ընդհանուր ժողովների: Ընտրվեց մասնաժողով—աշխարհական և հոգեւորական կազմով—մշակելու, վերջնականապես ձեւակերպելու թեղիսները և հրավիրելու թեմական պատգամավորական ժողով: Մասնաժողովը իմ նախագահութեամբ յեռանդով կալով իր աշխատանքին՝ քաղաքային տան սենյակներից մեկում, 13 յողվածները ուշի ուշով քննեց բառ առ բառ, հողված առ հողված ու աննշան փոփոխութեամբ վերածեց 10 հողվածի—վորպիս նախագիծ յեկեղեցական բարեփոխութեան:

Ապա թեմական պատգամավորական ժողով հրավիրեցինք Թիֆլիսում՝ թեմի բոլոր քահանաներից, հոգաբարձութիւններից, հաջորդներից և գործակալներից՝ առաջնորդարանում մարտի 8-ին: Բազմաթիւ որինակներով կոչ տպագրեցինք, մշակված թեղիսները տարածեցինք թե մեր թեմում, թե Ռուսաստանի բոլոր թեմերում. մանավանդ շատ ուղարկեցինք ս. Եջմիածին, վոր ամեն տեղ իրագեղ լինեն Թիֆլիսի շարժմանը, հավատացած լինելով, վոր նման շարժումն առաջ կը գա և մյուս թեմերում:

Բայց առաջնորդարանի դռները միշտ փակ ցնացին թե տեղական ընդհանուր ժողովների և թե պատգամավորական ժողովի առաջ:

Առաջնորդ Մխիթար յայրսկոպոսի այսպիսի վարմունքը նրա համար ճակատագրական յեղալ. շուտով նա հեռացվեց Թիֆլիսից:

Պատգամավորական ժողովը յերեք որում վերջացրեց իր պարապմունքները. Գայիանյան դպրոցի դահլիճում և գոհ սրտով ցրվեց, համոզված, վոր ժամանակի պահանջներին իր տուրքը տվեց, նախագահութեան վրա պարտավորութիւն դնելով, վոր

վորոշումները պատշաճ հայտարարութեամբ ներկայացնել ամենայն հայոց կաթողիկոսին, և խնդրել նորին ոծութիւնից, վոր բարեհաճե վորքան կարելի է շուտ գումարել համադգային յեկեղեցական ժողով՝ սանկցիա տալու իր վորոշումներին:

Պատգամավորական ժողովին ներկա էին քաղաքից և թեմից 72 հոգի ձայնի իրավունքով. իսկ վորոնք չէին կարողացել գալ—հաջորդներ, գործակալներ և քահանաներ—գրավոր ուղարկել էին իրենց համաձայնութիւնը առաջադրված որակարգի խնդիրների նկատմամբ՝ ցանկալի և անհետաձգելի էին համարում որ առաջ իրականացած տեսնել մատնանշված բարեփոխութիւնները:

Թիֆլիսի և թեմի վողեւորված շարժումը իր բարերար հետևանքն ունեցավ: Մայր աթոռը կանխեց մեզ. նույն թվի հունիս ամսում ուսահայ բոլոր թեմերից հոգեւորական պատգամավորներ հրավիրեց՝ ս. Եջմիածին խորհրդակցական ժողովի՝ յեկեղեցական բարեփոխութեան համար:

Միայն Թիֆլիսի քահանայութիւնը ներկայացուցիչ չունեցավ Եջմիածնի համագումարում. նա չընտրեց այս ամբողջ շարժման նախաձեռնողին. իսկ ընտրվածները զանազան պատրվակներով չգնացին: Մխիթար յայրսկոպոսը այս մի խնդրում հաջողվեց:

Սակայն համագումարի բոլոր անդամներին ծանոթ էին մեր պահանջները, բայց սրանք ամենին չհիշատակվեցին այնտեղ, թեև հրատարակված բանաձևերից յերեւում է, վոր միևնույն խնդիրներն են արծարծվել և համարյա միևնույն վորոշումներին հանգել, բայց՝ կուսակրոնական վողով:

Այլ կերպ չէր ել կարող լինել. կուսակրոնութիւնը չէր կարող ինքն իրան ժխտել և պատմական ասպարեղից հեռանալ:

Թե Թիֆլիսի պատգամավորական ժողովի վորոշումները և թե Եջմիածնի համագումարի բանաձևերը իրանց տեղում կհիշատակվին:

Եջմիածնի համագումարը իր աշխատանքներն սկսեց 1917 թ. հունիսի 12-ին, ավարտեց 23-ին: Ներկա էին լինում 29 կուսակրոն և 38 աշխարհիկ հոգեւորականներ, ընդամենը 67 հոգի:

Ս. Եջմիածինը 15 տարի առաջ առևտրաֆեի ենթարկեց, խարույկի մեջ այրեց իր արժանավոր անդամ Յերվանդ վարդապետ Տեր-Մինասյանի հողվածը յեկեղեցու բարեփոխութեան մասին և հեղինակին այնպիսի պայմանների մեջ դրեց, վոր նա թողեց վանքը և նորից աշխարհ մտավ: Ս. Եջմիածինը 25—30 տա-

րի առաջ՝ անհավատ, անաստված, անկրոն և ազգի ու յեկեղեցու թշնամի յեր համարում այն մարդկանց, վորոնք յեկեղեցու մեջ անմեղ բարեփոխություն եյին պահանջում: Այժմ, եջմիածինը ամբողջ հոգեւորական կազմով խոստովանւում ե, վոր յեկեղեցին խախտել ե իր նախկին պարզությունը, սղաւաղվել ե. պետք ե նախկին պարզությունը մտցնել, անհրաժեշտ ե բարեփոխել նրան:

Փետրվարյան յեղափոխությունը իր բարեբար ազդեցությունն ե ունեցել մայր աթոռի ղեկավարների վրա: Մեր բոլոր սրտից շնորհավորում ենք այդ հեղաշրջումը, վոր ապացուցանում ե թե՛ յեկեղեցու հիմնական բարեփոխությունը ժամանակի հասունացած պահանջն ե:

Այնուամենայնիվ՝ Ս. Եջմիածինը համազգային յեկեղեցական ժողով գումարելու կարգադրությունը ուղացում ե՝ թեև՝ թե թիֆլիսի պատգամավորական ժողովը, թե ս. Եջմիածնի պատկառելի համագումարը, թե առանձին՝ մայր աթոռի միաբանությունը, և թե, վորքան ի լրո տեղեկություն ունինք, ամեն թեմերից և արտասահմանից շարունակ դիմումներ են լինում այն մտքով և պահանջով, մինչև անգամ գերագույն հոգեւոր խորուրդը շրջաբերականներով դիմել ե թեմական առաջնորդներին, առաջարկել ե գումարվելիք ազգային յեկեղեցական ժողովի որակարդի ուրվագիծը, պահանջել ե տեղերում հրավիրել խորհրդակցություններ, պատրաստել ղեկուցումներ, բայց և այնպես չեն նշանակում ցանկալի ժողովի որը. և, ինչպես յերեւում ե, այս որը մենք չպիտի կարողանանք տեսնել, մինչև թեմերը կտրուկ պահանջներ չանեն, իրենք չվորոշեն ժողովի ժամանակը և որը, և չխնդրեն ու չպահանջեն, վոր անպատճառ, առանց յետաձգելու պաշտոնապես հայտարարվի այդ որը և կարեւոր կարգադրություններն անվին:

VII. Յեկեղեցու հիմնական բարեփոխության անհրաժեշտությունը յեկ ծրագիրը

Ուրեմն՝ յեկեղեցու հիմնական բարեփոխության պահանջը այնքան ե հասունացել, վոր առանց հետաձգելու լուծումն ե պահանջում: Ամեն կողմից այս ե լսվում: Այո, կան անհաստատական առարկություններ, վորոնք սակայն դեմ չլինելով բարեփոխության, ժամանակն են չար համարում, այդ պատճառով միայն խորհուրդ են տալիս դեռ սպասել: Մինչդեռ ամենամեծ չարիքը բարեփոխությունը հետաձգելն ե, դանդաղելն ե, ինչպես և ս. Եջմիածինն ե արամադիր:

Անհապաղ բարեփոխություն և հիմնական բարեփոխություն. այս ե ժամանակի հրամայական պահանջը:

Գլխավորն այն ե, թե բարեփոխությունը վեր չափով ե ինչ սահմաններում պիտի կատարվի: Ահա այս գործնականի խնդրում առաջ են գալիս տարբեր հայացքներ ու կարծիքներ, սակայն թող ներվի ինձ ասել, վոր տարբերությունը գաղափարական չե, ամենեւին, այլ ճաշակի և սովորույթի տարբերություն: Հավատքի խորությունը չե, վոր ծնում ե այս տարբերությունը, ավետարանական գաղափարների տարբեր ըմբռնումները չեն, վոր հայացքների ու կարծիքների տարբերություն են առաջ բերում. վնչ, դրա համար մեր ժողովուրդը շատ և շատ ազատամիտ ե. այլ միայն և միայն սովորությունը շրջապատի. այսպես կոչված դարեւոր հարեւրանությունն ե այս կամ այն կարծիքը թելադրում, այս կամ այն հայացքը ներշնչում:

Հեռու չգնանք, դեռ յերեկ ականատես եյինք գատիկ տոնակատարության շուրջը բորբոքված իրարանցումին, աղմուկին, և յեթե խոհեմություն գործ չգրվեր, գուցե և տեղի ունենար տուր ու դմբոց, վորի հետևանքով և արյուն կը հոսեր անշուշտ:

Պատճառն ինչ եր:

— Աչքներս բաց ենք արել՝ վրացիների ու ուսուցիչի հետ ենք զատիկը տոնել. այժմ ինչ կասեն՝ թե ինչի համար ենք բաժանվում նրանցից, պատասխանում ե ամբողջ:

Իսկ ամբողջի գրգռող, առնվազն նրա ամբողջային ինստինքտը քաջալերող քահանայությունը առաջնորդվում եր լոկ տնտեսական խնդրով, վորի մեջ սակայն շատ շուտ համոզվեց իր սխալը:

Ինչ և իցե՝ բարեփոխության գործնական աշխատանքի մեջ մեր կողմից պահանջվում ե զգուշություն, մեծ զգուշություն և իմաստուն հետախույսություն:

Հանդիսավոր ժամատացությանը մեր ժողովուրդը ընտելացած ե. այս նրա համար պահանջ ե: Ուրեմն՝ ինչ ձևի բարեփոխությունը վոր մտցնելու լինենք մեր յեկեղեցում, հանդիսավորությունը պետք ե պահպանված մնա:

Բարեփոխության բուն առարկան աստվածաշուքային բովանդակությունն ե, իսկ բովանդակությունը հայ ժողովրդի համար յերկրորդական, գուցե և յերրորդական նշանակութուն ունի:

Մեզ պաշտոնապես հանձնարարված ե՝ բարեփոխության խնդրում առաջնորդվել բրիտոնեյական յեկեղեցու նախնական

դարերի կյանքով յեւ սկզբունքներով. ուրիշ խոսքով՝ յեկեղեցին մոտեցնել առաքելական դարերի պարզությանը:

Այս և լինելու մեր աշխատութիւնը:

Ով շարունակ հետեւել և մեր ժողովրդի ամեն խավերի և հոգեւոր շրջանի մեջ արտայայտված կարծիքներին. ով ուսումնասիրել և մեր յեկեղեցու անցյալ և ներկա պատմութիւնը, նրա աստիճանական զարգացման ընթացքը՝ ժամանակի պահանջի թելագրանքով, ով ըմբռնել և նոր ժամանակի հրամայական պահանջները, նրա համար պարզ և, վոր ներկա բարեփոխութեան առարկան պիտի լինին հետեւյալ հարցերը.

1. Աստվածապաշտութեան լեզուն.
2. Աստվածապաշտութեան բովանդակութիւնը, ժամանակը և տոմար. սրբերի պաշտամունքը.
3. Աստվածապաշտութեան պաշտոնեութիւնը — դպիր, սարկավագ, քահանա, յեպիսկոպոս, կաթողիկոս.
4. Աստվածապաշտութեան սրբազնագործ պաշտոնյաների ցենզը, տարազը, տնտեսական, իրավական և հասարակական դիրքը, փճակը.
5. Կուսակրոնութիւն.
6. Յեկեղեցական համայնք, թեմ և համադպար յեկեղեցի.
7. Յեկեղեցական դիպքիպլինա — սահմանադրութիւն: Այս հարցերի լուծումից ե կախված մեր յեկեղեցու իրական և հիմնական բարեփոխութիւնը: Անցնենք ուրեմն յուրաքանչյուրին առանձին առանձին:

Ա. Աստվածապաշտութեան լեզուն. — Աստվածապաշտութեան կարգը, հավատացյալների խմբովին՝ միասին կատարված աղոթքն և. իսկ աղոթք նշանակում և խոսել Ասածու հետ, խնդրել Աստծուց մեր հանապազօրյա կարիքների, աշխարհի խաղաղութեան, մարդկանց հավատարմութեան մասին:

Յերբ մենք մեկի հետ խոսում ենք, մեկից մի բան ենք խնդրում, հասկանում ենք թե ինչ ենք խոսում և ինչ ենք խնդրում նրանից: Անշուշտ պատասխանն էլ պիտի հասկանանք ու ըմբռնենք: Միթե կարելի չէ հասկացածը խոսել, չիմացածը խնդրել և չգիտակցել թե ինչ և ասվում նրան:

Ամենևին: Այդ կը նշանակե խուլի և համբի գերում լինել: Խուլ և համբերը այն դժբախտ արարածներն են, վորոնք չեն հասկանում թե ինչ և կատարվում իրենց շուրջը:

Ճիշտ այսպիսի դրութեան մեջ են գտնվում ներկայումս հասարակաց աղոթքին, աստվածապաշտութեան կարգին ներկա գտնվողները յեկեղեցում:

Պարզ չե՞ թե ինչի համար յեկեղեցիները դատարկ են. թե ինչի ժամասացութեան ժամանակ ժողովուրդը մասնավոր խոսակցութեամբ և զրադված, կամ ավետարանի ընթերցման ժամանակ. յերբ Փրկիչն և խոսում մեզ հետ, շատերը թողնում, հեռանում են յեկեղեցուց:

Յեկեղեցի գնացողը հավատքի ընազդով և գնում. ուստի՝ անուշադիր հասարակաց աղոթքին, իր սեփական, շատ անգամ անկապ, անհասկանալի, մեծերից սովորած աղոթքներն և ժամընշում իր սիրած սուրբի պատկերի առաջ: Նա անուշադիր և քահանայի աղոթքներին, ընթերցվածներին, ավետարանին, վորովհետեւ վոչինչ չէ հասկանում: Նա ուշադիր և ներդաշնակ յերգեցողութեանը, մանավանդ պատարագին յերբ ներդաշնակ քառածայն յերգի հետ միացած և յերաժշտութիւնը:

Ուրեմն՝ աղոթքների, ավելի ուղիղը՝ ժամավորների միտքը յեկեղեցում չէ գործում, վորովհետեւ լսածից վոչինչ չէ հասկանում. նա այնտեղ զգացմունքների ապրումներ ունի միայն՝ ներդաշնակ յերգի ու յերաժշտութեան բարերար ու կրթիչ տպավորութեան տակ:

Մեր պապերը, մեր յեկեղեցու հայրերը կազմեցին, սահմանեցին աստվածապաշտութեան կարգը, գրեցին վոգեշունչ աղոթքներ, մեղեդիներ, յերգեր, շարականներ՝ իրենց ժամանակի հասկանալի լեզվով. Յեւ այն ժամանակ աղոթող ժողովուրդը, և վոչ սոսկ անգիտակից ժամավորները, լցվում եր յեկեղեցի. նա հասկանում եր աղոթքները, յերգերը, շարականները, ինքն էլ այդ բոլորը իմանալով և հասկանալով՝ վոգեւորված, հավատքով վոգեւորված՝ մասնակցում եր և աղոթքին, և յերգին, աղոթքը մըմընջալով, յերգը լսելի ձայնով: Ահա այն ժամանակ ժամասացութիւնը հասարակաց եր անվանվում:

Սակայն ժամանակի, դարերի ընթացքում, և վոլյուցիայի անողորմ որոնքով ամեն ինչ փոխվեց, կերպարանափոխվեց, թե յերկիրը և թե մարդը, նրա արտաքինը, նրա մտածելակերպը, նրա աշխարհահայեցողութիւնը, վերջապես և լեզուն: Այսպես՝ վոչ միայն հայը, այլ և բոլոր ազգերը: Վոչ մի ժամանակակից ազգ իր պապերի լեզվով չէ խոսում, այլ նոր, աշխարհիկ լեզվով:

Բայց մեր անհասկանալի գրաբար լեզուն անշարժ և տիրա-
բար մնացել է յեկեղեցում, ժամանակի, եվոյուցիայի որենքի
հետ չի ուզում հաշիվ տեսնել: Խնչի՞. իրեն ասածու լեզու. վնչ-
բոլոր լեզուները ասածու պարզեներ են, ինչպես և բոլոր մարդիկ
ասածու վարդիք են:

Մենք մեր ռոտարալեզու յեղրայրների հետ միշտ աշխատում
ենք հասկանալի լեզվով խոսել, իսկ ասածու հետ խոսում ենք
մեզ միանգամայն անհասկանալի լեզվով. ինչպես կարող ենք այդ
ասածուն հասկանալ:

Ու չենք հասկանում. և յերբ մեկին չենք հասկանում, հե-
ռանում ենք նրանից, նրանից կտրում ենք մեր յարաբերություն-
ները: Ահա այսպես և հավատացյալ յորջորջող հայը անհասկա-
նալի գրաբար լեզվի պատճառով հեռանում է ու հեռացել է իր
աստուծուց:

Յեւ թիւ է տուժում. ինքը՝ յեկեղեցին:

Պեաք չե՞ արդյոք մոտեցնել այդ ժողովրդին իր ասածուն:

Անպատճառ, կը պատասխանեք բոլորդ անխաբիր:

Ուրեմն՝ մեր յեկեղեցին իր ժողովրդին հասկանալի և սիրելի
դարձնելու առաջին անհետաձգելի պայմանն է՝ աստվածաշնոր-
թյան գրաբար լեզուն վերածել աշխարհիկ լեզվի, թարգմանել
աշխարհարար՝ հասկանալի լեզվով և նրանով կատարել աստվա-
ծաշնորթյան կարգը, ժամասացությունը:

Յեւ վորովհետեւ այս հարցը համազգային նշանակություն
ունի, յենթակա ե համազգային յեկեղեցական ժողովի վճռահա-
տությանը, անհրաժեշտ է որ առաջ գումարված տեսնել այդ
ժողովը:

Բ. Աստվածաշնորթության կարգի բովանդակությունը, ժա-
մանակը յեւ տոմար. սրբերի պաշտամունքը: — Գերազան-
ցուն լուրջ ու ծանր խնդրի առաջ յենք կանգնած, հետևաբար
յուրաքանչյուրից, մանավանդ ղեկուցանողից պահանջվում է
նույնքան գերազանց զգուշություն:

Ոոսքս վերաբերում է աստվածաշնորթության կարգի բովան-
դակությանը, ծավալին. անհրաժեշտորեն առաքելական դարերի
պարզությանը պիտի մոտեցնենք. դրա դեմ յերկու կարծիք չկա.
սակայն վեր չափով ինչպես: Աստվածաշնորթության վեր մասը
վերցնենք վեր թողնենք, վոր իր նախկին հմայքը վերստանա:

Զե՞ վոր հայությունը, այնպես և հայոց յեկեղեցին միայն
Խորհրդային Միության մեջ չե. նա տարածված, ցրված է յեր-

կրագնդիս բոլոր մասերում — և արեւելքում, և մերձավոր ու հե-
ռավոր արեւմուտքում, և հյուսիսում և հարավում: Նա գտնվում
է և կաթոլիկ միջավայրում և բողոքական բազմաճյուղ յեկեղեցու
շրջանում. ամեն տեղ ստանում և տարբեր ապավորություններ:
Պետք է այդ բոլորը հաշվի առնենք թե վնչ:

Հայոց յեկեղեցու միությունը պահպանած լինելու նախա-
ձախդրութեամբ՝ համաշխարհային ծավալով պիտի նայենք և մո-
տենանք այս կարեւորագույն խնդրին և այնպես լուծենք, վոր-
պեսզի վորեն պառակտում առաջ չգա հայոց առաքելական յեկե-
ղեցու մեջ, առանց բնավ հաշվի առնելու թե ինչպես յեն վերա-
բերվում նույն խնդրին ռոտարալական մեր հոգեւոր յեկեղեցիները:

Յեկեղեցու միությունը այն նշանակությունը չունի պետա-
կանապես ամուր կայունություն ունեցող ազգերի համար. ինչ-
պես հայութեան համար: Մեծ Ամերիկան, վորտեղ բողոքական
յեկեղեցին իր բազմաթիւ ստորաբաժանումներն ունի, վոչինչ չի
կորցնում, գուցե և ոգավում է: Այդպես չի սակայն հայութեան
և սրա յեկեղեցու վիճակը: Հայութեան մեծ մասը իր փոքրիկ
հայրենիքից դուրս է գտնվում, գանադան պետութեանների սահ-
մաններում, տարբեր քաղաքական և հասարակական իրավակարգի
մեջ, իրանից կուլտուրապես ավելի բարձր ազգերի մեջ: Գերմա-
նացին Ամերիկայում մնում է գերմանացի, բայց հայը թմերիկա-
յում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում,
նույն իսկ Ռուսաստանում կմնա արդյոք հայ: Ո՞ւր է Լեհաստանի
մեծ հայ գաղութը. լուծվել է իրանից կուլտուրապես ավելի
բարձր շրջապատի մեջ՝ սկսած այն որից, յերբ հայոց յեկեղեցին
անշատվից Նշմիածնից և միացավ կաթոլիկ յեկեղեցու հետ: Վե-
րացավ հայադավան հայ յեկեղեցին, անհայտացավ և հայ
ազգությունը:

Այդպես է կուլտուրապես ավելի ստոր աստիճանի վրա կանդ-
նած բոլոր ազգութեաններին պատկանող գաղութների վիճակը,
առավել ևս հայութեան վիճակը՝ հայի ռոտարալութեան և կուլ-
տուրապես ավելի ստոր աստիճանի վրա գտնվելու շնորհիւ: Գա-
ղութահայերի միմյանց հետ և մայր հայրենիքի, փոքրիկ, բայց
սիրելի Հայաստանի հետ կապողը է և կլինի յեկեղեցին:

Յեկեղեցին պետութեանից բաժանված է՝ վորպես տարբեր
աշխարհահայեցողութեաններ, բայց ազգային միութեանը, կապը
պահպանելու խնդրում՝ գերազանցորեն քաղաքական արժեք ունի
հայերիս համար:

Առանձնապես մեր ցիր ու ցան ազգի միութեան տեսակետով հայոց յեկեղեցու միութեանը անհրաժեշտ է պահպանել: Ահա այս տեսակետը մեզ առաջնորդ ու ղեկավար պիտի ընդունենք աստվածաշնորհութեան կարգի բարեփոխութեան խնդրում:

Ամենուրեք միևնույն պահանջն ու ցանկութեանն է լսվում. կարճել, համառոտել աստվածաշնորհական կարգը, առաքելական դարերի պարզութեանը մոտեցնել նրան. այդպես է ասում նույն իսկ մայր աթոռ ս. Եջմիածինը: Քիչ չեն և նրանք, վորոնք ուղղակի պահանջում յեն՝ առաքելական դարերի պարզութեանը վերածել:

Այո, պետք է մոտեցնել առաքելական դարերի պարզութեանը. այստեղ հնարավոր է մի ընդհանուր լեզու գտնել: Բայց միանգամայն անկարելի և անհնար է առաքելական դարերի պարզութեանը վերածել աստվածաշնորհութեան կարգը. անկարելի չէ, վորովհետեւ ժամանակակից հավատացյալի հոգեբանութեանը և աշխարհահայեցողութեանը անագին թռիչք և արել անցյալի համեմատութեամբ. ահա այդ թռիչքն է վոր անհնար է վերացնել:

Սրա հետ համընթաց առաջ են գնում ազգերի տնտեսական, աշխատանքի արտադրութեան պայմանները. այս պայմանների արդյունքն է մեր ամբողջ կյանքը, մեր բարեկեցութեանը, վոր անտես առնել չենք կարող մեզ առաջադրած բարեփոխութեան խնդրում: Հասարակաց աղոթքը չի կարող և չպետք է հակադիր տեղ ու ժամանակ գրավի այս պայմանների հանդեպ: Աշխատավոր մարդը, յերբ պահանջ է զգում աղոթել իր աստծուն, առանձին կամ համախմբված, չպետք է իրեն կաշկանդված զգա այդ ներքին, հոգեկան պահանջի և աշխատանքի պայմանների մեջ՝ հատկապես հասարակաց աղոթքի ժամերին: Առանձին աղոթք նա կարող է կատարել և իր սենյակում, իր առանձնութեան մեջ. իսկ հասարակաց աղոթքը, վոր հոգևոր-կրթական, կրոնա-բարոյական անագին, անգնահատելի նշանակութեան ունի, հարկավ յեթե այդ աղոթքը կրթող ձև ու բովանդակութեան կատանա, վնչ միայն հակադիր չպետք է դրվի աշխատանքի պայմաններին, չպետք է խանգարի նրանց, ընդհակառակը գրավիչ ներդաշնակութեան պիտի կազմի նրանց հետ, վոր թե աղոթքը և թե աշխատանքը քաղցր, հոգեպարար սփոփանք լինի աշխատավորի համար:

«Ով չի աշխատում, նա չի կարող ապրել»:

Այսպես է ասում և կրոնը և ժամանակակից աշխարհայեցողութեանը: Ամենքն ևլ պետք է աշխատեն: Իսկ աշխատանքի ժա-

մերին հասարակաց աղոթքի կանչել աշխատավորին, անընդունելի չէ և աստծուն և աշխարհիկ-կյանքին:

Աստվածաշնորհութեան կարգին նոր բովանդակութեան տալը, ըստ այնմ նոր տոնացույց կազմելը, անհատի ուժից բարձր է. անհրաժեշտ է ընտրել գիտակ հոգևոր և աշխարհական անձերից բաղկացած մասնաժողով և նրանց հանձնել այդ աշխատանքը. յես այստեղ կը բավականանամ ընդհանուր դիտողութեաններով միայն, վորոնք ընդունվելու դեպքում կծառայեն վորպես գիրեկտիվներ այդ մասնաժողովի համար:

ա. Լուր որերը յեկեղեցիները դատարկ են լինում նախ՝ այն պատճառով, վոր ժողովուրդը աշխատանքի մեջ է լինում, յերկրորդ՝ խոնարհեցոն ու ապրեցոն ալլևա չեն զոհացնում աղոթողների հոգին ու միտքը: Այդ որերը քահանան չորս պատերի համար է ժամ ասում, յեթե միայն ասում է, արդարև՝ յերբ ժամավորներ չկան, հում համար պետք է ասե. չե՞ վոր հասարակաց աղոթք է: Յեվ շատ տեղ այդ որերը ժամասացութեան չի լինում:

Կյանքը այդ խնդիրը լուծել է, մնում է որինակացնել: Այդպես է և ուսանների և վրացիների մեջ:

բ. Շաբաթ յերեկոները և կիրակի՝ պատարագին ժողովուրդը լինում է այն յեկեղեցիներում, վորտեղ համեմատաբար կարգ, կանոն և տանելի ժամասացութեան և հերդաշնակ յերեցողութեան կա:

Ուրեմն՝ շաբաթ յերեկոյանները ժողովուրդը ազատված լինելով աշխատանքից, կարող է գնալ հասարակաց աղոթքի: Կիրակի առավոտներն ևլ մարդ չի լինում յեկեղեցիներում: Ուրեմն՝ պետք է պահպանել շաբաթ յերեկոյի բարեփոխված ժամասացութեանը կիրակի որվա առավոտյան բարեփոխված ժամասացութեան հետ կից — ուժ տալով յերգին, յերաժշտութեանը և ավետարանական քարոզին՝ ընթերցվածների փոխարեն:

գ. Պատարագը աստվածաշնորհութեան կարգի ետևան կենտրոնական մասը պիտի կազմի, հետևաբար կրճատումն ու բարեփոխութեանը զգուշավոր. իմ խորին համոզմունքով ավետարանի ընթերցումից հետո պետք է վերացնել հավատամքը — հավատի հանգանակը: Մի զարմանալ: Հավատի հանգանակը ըստ առաքյալների ամենասուրբ յերրորդութեան դավանութեանն է — հայր, վորդի և սուրբ հոգի: Աստված մի յէ — հոգի անտեսանելի, անիմանալի, անըմբռնելի: Այսպես դավանելուց հետո վերկենալ և այս դավանութեան վրա հիմնել ամբողջ սիստեմ, վոր կազմվել է առաջին տիյե-

գերական ժողովում (125 թ.) և լրացվել հետագայում—հոր, վորդու և ս. հոգու անձնավորութանց դեմ մղված վեճերի հետևանքով, վորոնք կորցրել են իրենց այժմեությունը, միանգամայն ավելորդ է, նույն իսկ վոչ նպատակին ծառայող, վորովհետև վոչ մի մարդկային միտք չի կարող այն սահմանները գծել անխնայալի ու անըմբռնելի դավանած աստծու յեռանձնյա գաղափարների մեջ, վորպիսին դրել է առաքելական դարերի յեկեղեցու հայրերի արևելոծված մաքուր յերևակայությունը: Մինչդեռ ս. յերբորդութան յերեք անձինք մի աստծու տարբեր արտահայտումներն են նրա կատարած գործերի բնույթով՝ վոր չափով մարդու տկար միտքը կարողացել է բմբռնել և իր հոգուն բավարարել:

Այժմ այդ հոգուն պետք է բավարարել ներդաշնակ յերգ յերաժշտությամբ և ավետարանական իմաստալից քարոզներով:

Պատարագի մեջ անհրաժեշտ է վերացնել բարձրաձայն հիշատակությունները:

գ. Վերացնելով լուր որերի ժամասացությունը, ինքն ըստ ինքյան լուծվում է և սրբերի պաշտամունքը: աստվածապաշտության և վոչ աստվածապաշտության կարգը հասարակաց աղոթք է, ուղղված առ աստված. հասկանալի չէ, վոր այդ կարգի մեջ սրբերի պաշտամունքը մտցնելը հակառակ է ավետարանի վոգուն. դա քրիստոնյացրած հեթանոսական արարողություն — պաշտամունք է: Այսպես ընդունելով՝ պետք է հետեցնել, վոր՝ վոչ ինչ սրբերի պատկերները պետք է անպատճառ հետացնել յեկեղեցիներից, այլ մանավանդ յեկեղեցին, մի աստծու տաճար՝ վորեն սրբի անունով կոչելը անթույլատրելի պետք է համարել: Այդ և ուխտագնացությունը հեթանոսական կարգերի մնացորդներ են:

Քաղաքումս կան յեկեղեցիներ՝ ս. Աստվածածնին, ս. Գե. վորգին, ս. Սարգսին ու ս. Լուսավորչին նվիրված, նրանց անունով ոծված, մկրտված. բայց դրանց տոներին՝ ժողովուրդը ահագին ծախսեր անելով, հազար ու մի նեղություններ կրելով հեռու տեղեր է գնում ուխտ, այնտեղ գտնված սրբերին համարելով ավելի զորավոր, վորոնք յերազում, կամ տեսիլքով և կամ գրբացների գուշակությամբ պահանջել են ուխտավորից այս, կամ այն մատաղը:

Այս կուսապաշտություն չէ հապա ինչ է:

Ուխտատեղիների հետ կապված է մի անահավատություն, փահլանների պաշտամունքը, վոր մանավանդ մեծ չափեր է ընդունել Նոր-Բայազետի շրջանում:

Փահլանները, կամ քյանդրադները խաղում են լարերի վրա: Այդ՝ յեթե ժողովրդին զվարճացնելու համար լինել միայն, վորպես մի անմեղ արհեստ, վոչինչ չէինք ունենա դրա դեմ: Ուխտատեղիներում, շատ արհեստավորներ իրար հետ մրցում են, ինչպես և աշուղները: Այստեղ մենք ծանրանում ենք այն՝ քրիստոնյական կրոնը նվաստացնող — աղավաղող հանգամանքի վրա, վոր քյանդրադները իրանց խաղի միջոցին ստանձնում են և քարոզչի, հոգևոր պրոպագանդիստի պաշտոն. վորպես թե իրենց շնորքը վոչ թե վորոշ աշխատանքի պտուղ է, այլ ստացել են ս. Կարապետից. և նրա հետ կենդանի հարաբերության մեջ են, տեսիլքներում տեսնում են նրան, խոսում են նրա հետ, նրա կամքը հաղորդում են ժողովրդին, և վայ նրան, ով որ ս. Կարապետի կամքը չի կատարի. ինչ պատիժ ասես, կը թափվի վրան: Յեվ ինչ էք կարծում, ինչ է ս. Կարապետի կամքը — մատաղ անել, ուխտ գնալ, փահլանին լավ վարձատրել, աջահամբույր և խաչահամբույր շատ տալ: Ու մեր անահավատ ժողովուրդը սարսափած խուժում է զեպի փահլանը և ուխտատեղին, վոգևորված ունկնդրում է նրա մարգարեյությունները. լսում է քյանդրադի թալանչիների, տակի մասխարայի տափակ սրախոսությունները «յոթն անվան տեր ս. Կարապետի» անունով: Յեվ առատ նվերներ է, վոր ստանում է անահավատ ժողովրդից՝ փող, մթերք, իրեր: Այդտեղ առատ հունձ է անում և հայ հոգևորականը, պահպանիչներ ասելով, իսկ սրտումը ծաղրելով այդ ժողովրդի տգիտություն վրա:

Այս մեծ նախատինքը պետք է՞ մաքրել քրիստոնեական յեկեղեցու վրայից:

Մահավատությունը քաջալերել ու հաստատել է ժողովրդի մեջ, առաքելական աստվածապաշտության կարգն է մտցրել հայ հոգևորականությունը, մտցնելով հետին դարերի մաշտոցների մեջ՝ իբրև կանոն և սրբազնագործել է վորպես կրոնի անբաժան մասը:

Ինչի՞ համար, միթե չէք հարցնիլ, հարգելի պատգամավորներ: Վորովհետև այդ կանոնները առանձին-առանձին վճարվի չեն, ծառայում չեն վորպես ապրուստի աղբյուր մեր հոգևոր դասի համար:

Մահավատության այսպիսի կանոնները 15 հատ չեն մեր մաշտոցի մեջ, սրանց դեմ բողոքում է նրա հեղինակ ս. մաշտոցի մաքուր, առաքելական հոգին ու ջնջել է պահանջում:

վերացնելով սրբերի պաշտամունքը, նրանց հետ և մասունքների պաշտամունքը, առ հարկի հետևյալ բացառությունները պիտի ընդունենք:

1. Բոլոր մարգարեների համար մի տոն.
2. Ս. Աստվածածնի մի տոն.
3. Բոլոր առաքյալների համար մի տոն.
4. Առանձին՝ չորս ավետարանիչների համար.
5. Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների — մեր առաջին լուսավորիչների տոնը.
6. Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի նահատակումը.
7. Յերկրորդ լուսավորիչ ս. Գրիգորի վերապր մոտենալու տոնը.
8. Վերապրից յեկնելը.
9. Ս. Եղիաթանի տոնը,
10. Շողակաթի տոնը.
11. Հովհ. Մկրտչի ծննդյան տոնը.
- 12 Ս. Հռիփսիմյանց և Գայանյանց և բոլոր կույսերի միացյալ տոնը:
13. Ս. Ստ. նախասարկավագի նահատակությունը.
14. Սահակ և Մեսրոպ թարգմանիչների տոնը.
15. Ներսես մեծ հայրապետի տոնը.
16. Վարդանանց զորավարների տոնը.
17. Ղևոնդյանց քահանաների տոնը.

Դ. Տերունական տոներ.

1. Ավետումն ս. կուսի. ապր. 7.
2. Ծնունդ և մկրտություն Քրիստոսի հունվ. 6.
3. Անվանակոչություն տյառն հունվ. 13.
4. Տեսնողառաջ փետր. 14.
5. Զատիկ, հարություն Քրիստոսի վոր առում և 40 որ.
6. Համբարձումն.
7. Ս. Հոգու Գալուստ.
8. Քրիստոսի պայծառակերպությունը — փետր և Ջնջի վարդավառ անունը, վորպես հեթանոսությունից մնացած անուն.
9. Ս. Խաչի միացյալ տոնը.

Տերունական տոները ունեն իրանց հատուկ ժամակարգությունը վոր պիտի բարեփոխվին:

Իսկ սրբերի տոների հատուկ ժամակարգությունը մեծ բարեփոխության կարոտ և. ցանկալի յե այս տոների հատուկ ժամակարգությունը վերացնել, բավականանալ սովորական ժա-

մասացությունը. տոնի առիթով, տոնի գաղափարից բխող բովանդակալից քարոզը միանգամայն կիտարինե հատուկ ժամասացություն:

Ե. Լուր որերի ժամասացության վերացումով ինքնին վերացված պիտի համարել և իր նշանակությունը բոլորովին կորցրած պատր և պատի հատուկ ժամասացությունը, բացառությամբ մեծ պատի և ծննդյան պատի: Մեծ պատին ևս ցերեկը ժամավորներ չեն լինում՝ բացի առաջին, Լուսավորչի, ծաղկազարդի և ավագ շաբաթներից: Մեծ պատի ցերեկյան ժամասացությունը մասնավոր փոփոխությամբ կարելի և թողնել, ինչպես և վերոհիշյալ շաբաթներինը, ընթերցվածները փոխարինելով պատշաճ քարոզներով, կարևոր տեղ տալով յերգին և յերաժշտության:

զ. Յեկեղեցու խորհուրդները կատարվել և կատարվում են ժամանակի և տեղի ըմբռնման և ժողովրդի պահանջի համաձայն:

Հիվանդների ոժուժը այժմ մեր յեկեղեցում գոյություն չունի. նույն իսկ անհայտ և թե երբ և ինչ չափով և յեղել առաջ:

Մկրտությունն ու զրոշմը լուկ ձևականություն են դարձել. մաշտոցի խրատն ասում և—«Ի ժամ մկրտության խրատել գնա, թողուլ զծերություն հնություն մեղաց և տղայանալ ի Քրիստոս վորպես նորածին յանմեղություն դառնալ»: Այս խրատին հակառակ մենք մկրտում ենք անխոս և անգիտակից ցերեխային. մինչդեռ, ինչպես մաշտոցի խրատից յերևում և, մկրտվողը հասունացած պետք և լինի, սովորած Քրիստոսի վարդապետությունը, նրա ամբողջ կյանքն ու գործունեությունը:

Անլեզու, անխոս ցերեխային ինչ կարելի յե սովորեցնել: Ձևականություն, ինքնախաբեկություն չե, յերբ մկրտվող ցերեխային գնում ենք կնքահոր դիմել և աղոթում— «մերկեա ի ամանն զհնություն մեղաց յեվ նորոգյա ի կյանս նորա...»:

Ապա կնքող քահանան հարցնում և. «Յերեխայս զինչ խընդրե». կնքահայրը նրա փոխարեն պատասխանում և. «հավատք, հույս և մկրտություն. մկրտիլ և արդարանալ, սրբել ի մեղաց, ազատել ի դիմաց և ծառայել աստուծոյ»:

Յերեխա, կամ երախա՝ նշանակում և չմկրտված. ուրեմն՝ քրիստոնեական ուսումն ու վարդապետություն սովորած և մկրտության համար պատրաստված չափահասն ել ցերեխա յե համարվում. աղալիսին միայն ի վիճակի յե պատասխանել «հավատք, հույս և մկրտություն, և այլն և այլն»:

Այժմ, յերբ մեր զավակները մինչև չափահաս դառնալը մերը չեն, յեկեղեցուներ չեն, նրանց մեծ մասն ել չի մկրտվում, այնուհետև միայն, թե նրանք կը ցանկանան, կարող են յեկեղեցու համայնքի անդամ գրվել (18 տարեկանից սկսած), յեկեղեցու և կրոնի շահն ու գերագույն գաղափարը պահանջում են, վոր հենց այն ժամանակ ել մկրտվին նրանք. Ահա այն ժամանակ մկրտության խորհուրդը իսկական խորհրդավորություն կը ստանա, փառավոր հանգես կը ներկայացնեն. կարող եք պատկերացնել, թե վճռալիս հավատքով ու ոգևորությամբ կարտասանեն չափահաս և քրիստոնեական վարդապետությանը գիտակից մկրտվողը—հավատք, հույս և մկրտություն. մկրտիլ և արդարանալ, սրբել ի մեղաց և ծառայել աստուծոյ:

Նա իր վոգևորությամբ կը վոգևորեն և իր մերձավորներին, և հարազատներին, և հրավիրյալներին, մանավանդ մկրտող քահանային:

Այսպիսի մկրտությունը յես հասկանում եմ:

Անշուշտ առարկայներ կը լինին թե՛ այս դրությունն ընդունելուց հետ քանի՞ չափահասներ կը պատրաստվին ու կը գան կը մկրտվին. Յեվ կը գան արդյոք:

Յերբ մենք, յարգելի պատգամավորներ, հավատացյալ համայնքների հավատացյալ ներկայացուցիչներս, մեր յեկեղեցիները կը դարձնենք իսկական յեկեղեցիներ, իսկական՝ աստծու տաճարներ, յերբ յեկեղեցին կը դարձնենք հավատի և բարոյականության լսարան, հոգևոր յերդի ու յերաժշտության սրբավայրեր, այն ժամանակ, հավատացած յեղեք, վոր՝ «ամենայն վաստակյալք և բեռնավորք» կը գան և կատարյալ հանգստություն կը գտնեն այնտեղ. հավատացած յեղեք, վոր բոլոր զրկվածները, ճնշվածները, հարստահարվածները, մի խոսքով՝ բոլոր թշվառները կը գան և հոգու, սրտի անդորրություն կը գտնեն այնտեղ. բոլոր մոլորվածները կը գան և ուղղություն կը ստանան այնտեղ, Աստծու տան մեջ: Այն ժամանակ, ահա, բարեկիրթ և բարեպաշտ ընտանիքների բարեկիրթ և բարեպաշտ չափահաս զավակները կը գան և կը մկրտվին այնտեղ:

Այնուհետև չե թե յեկեղեցին կը նվազի, կը դատարկվի, այլ՝ կը լցվի, կը զարգանա, կը փառավորվի և աստուծո արքայությունը յերկրիս վրա կը հաստատվի:

Այն ժամանակ յեկեղեցին կը կենդանանա և կյանք կը շնորհի աշխարհին:

Անմտություն, ինքնախաբեկություն չե՞ մկրտել անլեզու մանուկին, առանց հաշիվ տալու մեզ՝ թե վաղը, ապագայում, չափահաս դարձած ժամանակ ի՞նչ պետք ե պատկանեն նա. յեկեղեցու թե նոր աշխարհին:

Ապաշխարհությունը բոլորովին կորցրել ե իր՝ և նպատակը և նշանակությունը, և շատ, շատ շուտ ե կորցրել: Ապաշխարհությունը իր անբաժան մեղայով՝ մի անբովանդակ ձևականություն ե, վոր հակասում ե ավետարանի քարոզած ապաշխարհության գաղափարին: Մինչ—ավետարանի ապաշխարհությունը հավատացյալի վրա պարտավորություն ե դնում բարի գործեր կատարել, յեկեղեցու սահմանած ապաշխարհությունը՝ մի քանի որ ժամ գնալն ու անհասկանալի «մեղան» արտասանելով ե սահմանափակվում, ապա քահանայից արձակումն ստանալով՝ համոզվում ե, վոր ազատվել մաքրվել ե իր մեղքերից, ու հանգիստ խղճով հաղորդվում ե:

Այս արարողությունը, այս ձևականությունը ինքնախաբեկություն ե, յարգելի պատգամավորներ, իսկ ձևականությունը անխուսափելիորեն տանում ե դեպի անտարբերություն, անհավատություն:

Բաց անենք ավետարանը և տեսնենք թե՛ աշխարհի դատավոր փրկիչը ի՞նչ ե ասում իր մոտ հավաքված—յարություն առած և կենդանի մարդկանց—բոլոր աղգբերին, բոլոր կրոններին ու դավանություններին պատկանող մարդկանց:

«Յեկեք ինձ մոտ, իմ հոր որհնվածներ և ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը, վորովհետև՝ քաղժած եյի, կերակրեցիք ինձ, ծարավ եյի, ջուր տվիք, դուրսն եյի մնացել, ոթեման տվիք, մերկ եյի, հիվանդ եյի, խնամեցիք ինձ, բանտումն եյի, այցելեցիք ինձ»:

Յեվ զարմացած մարդկանց հարցերին պատասխանում ե.

«Վորովհետև իմ փոքր յեղբայրներից մեկին այդպես արիք, ուրեմն՝ ինձ եք արել»:

Աշխարհի սկզբից մինչև վերջին դատաստանի որը քանի՞ միլիարդ մարդիկ մեռած կը լինին և քանի՞ միլիոն մարդիկ՝ կենդանի—հեթանոսներ, պանդան կրոնների ու աղանդների պատկանողներ, վորոնց մենք, ուղղափառ հավատացողներս մերժում ենք, արհամարհում ենք, մեր դավանած հավատամքից մի փոքր շեղվածներին՝ գեհենի վորդիք ենք համարում. իսկ փրկիչը՝ բոլոր մարդկանց մի ասածու վորդի և յեղբայրներ ճանաչող ու քարո-

զող փրկիչը՝ իր մոտ հավաքված բազմություն մեջ փնտրում է ճշմարիտ մարդիկ, մարդիկ, վորոնք կատարել են իրենց մարդկային, յեղբայրական պարտքը դեպի իրենց մերձավորները, կրտսեր յեղբայրները:

Փրկիչը չէ հարցնում իր մոտ հավաքված միլիարդավոր մարդկանց—դուք քրիստոնյա՞նք, բուդդայական կամ բրահմինական եք, մահմեդական կամ մովսիսական եք, կաթոլիկ, հունադավան կամ հայ լուսավորչական եք, վոչ, սիրելիք, վոչ. նա այդպիսի հարցեր չէ տալիս. այլ հարցնում է՝ դուք մարդ եք, ձեր մարդկային պարտավորությունները կատարե՞լ եք: Յեթե այո, դուք փրկված եք, ասածու արքայություն ժառանգներ եք, իսկ յեթե վոչ՝ զենհնի ժառանգորդներ եք:

Ահա ձեզ ավետարանը, ճշմարիտ ավետարանը և մեր ժամանակակից յեկեղեցին: Վո՞րպիսի վիճ է բացված յերկուսի մեջ: Անանցանելի վիճ:

Արդ՝ մեր առաջ դրված է մի մեծ խնդիր. լցնել ավետարանի և յեկեղեցու մեջ բացված վիճը, վոր յեկեղեցին դառնա ավետարանի իսկական, հարազատ քարոզիչը:

Ծանր է, մի սերունդի ույթից բարձր է այդպիսի մի գործը, բայց անհնար չէ:

«Անհնարինքն առ ի մարդկանս հնարավորք են յԱստուծո», ասում է դարձյալ փրկիչը:

Դրա համար անհրաժեշտ է զինվել ավետարանական հավատքով ու աշխատել. և հավատացած յեղեք, վոր մերձավոր սերունդը կը լցնե այդ սարսափելի վիճը: Ու յեկեղեցին ավետարանի փոխարկված՝ ի վիճակի կը լինի՝ Աստուծու արքայությունը, այսինքն՝ արդարություն և հավասարություն հաստատել յերկրիս վրա:

Այնուհետև կը վերանան կրոնների տարբերությունները և, ինչպես փրկիչն է ասում—«յեղիցին մի հոտ և մի հովիվ»:

«Նաև այլևս վոչխարք են իմ, վոր վոչ են յայսմ գավթե և զայնս ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում ըլիցեն, և յեղիցին մի հոտ և մի հովիվ»:

Ապաշխարհությանը հետեւում է հաղորդությունը, վոր կատարվում է պատարագով, այս պատճառով պատարագը յեղել է քրիստոնեական աստվածաշտույթյան ամենազլխավոր մասը, այսպես ասած՝ զազաթնակետը: Բայց սկսած դ. դարից, պատարագի բնույթն ու նշանակությունը բոլորովին փոխվել է:

Պատարագը ավելի հետին ժամանակների անուն-տերմին է. նախնական քրիստոնյաները «տիրոջ հիշատակ» եյին կոչում, կամ «սիրո ճաշ», հետո փոխվեց և ձեք և նպատակը ու կոչվեց՝ հաղորդություն կամ անմահություն կերակուր, վոր անանցություն չնորհի մարդուն:

Ինչպես տեսնում եք՝ խորհրդավոր ընթրիքը—«տիրոջ հիշատակ», կամ «սիրո ճաշը»՝ հաղորդության կամ անմահության կերակուրի յե փոխվել, համայնքների անդամների մեջ միություն —սեր, յեղբայրություն, հավասարություն—պահպանելու զազափարը՝ մարդուն անանցություն տալու զազափարին է փոխվել:

Ուրեմն՝ ժամանակի ընթացքում և ժամանակի պահանջով՝ փոխվել է և ձեք և նպատակը: Արդ մեր ժամանակը վորեւ պահանջ չէ դնում մեր առաջ՝ բարեփոխել, համայնքի անդամների մեջ միության, այսինքն՝ հոգևոր յեղբայրության կապ հաստատելու զազափարը վերակենդանացնել, խորհրդավոր ընթրիքը վերահաստատել, առաքելական դարերի կյանքով ու սկզբունքով ապրել: Միթե մարդկանց մեջ միություն, յեղբայրություն, սեր հաստատելը ավելի բարձր, իսկական անանցություն տվող զափար չէ, քան մեր մտքին ու զգացմունքներին անհասանելի —անբմբունելի ձևակերպությունը:

Յեկեղեցական հիմնական բարեփոխության կենտրոնական մասը, բուն միջուկը այս է, վորի վրա պետք է կանգ առնել, մտածել, խորհել և արտահայտվել:

Այս է մեր ժամանակի հասունացած պահանջը, յեթե իսկապես մենք կամենում ենք ժամանակի հետ հաշիվ տեսնել:

Համենայն դեպս՝ հաղորդվելուց առաջ խոստովանությունը, վորպես անիմատ ձևակերպություն, պետք է վերջացնել. ով իրեն պատրաստ կը զգա հաղորդվելու, պետք է մոտենա պատարագչին, «մեղա ասածու» ասի և անարգել հաղորդվի:

Պատկը նույնպես յեկեղեցու խորհուրդներից մեկն է, վորի կատարելու ձեք—հալավ որհնեք, նշանորհներ և ապա պսակադրություն, մաշտոցի մեջ բավական տեղ է գրավում: Այնուամենայնիվ կյանքը, ժամանակը իր նոր ձևն է տվել. այժմ շատերը քահանային խնդրում են նեղություն չքաշել տուն գնալ, այլ սպասել յեկեղեցում. ուրեմն վերջացնում են հալավորհներ փեսայի տանը, նշանորհները՝ հարսի տանը: Յեվ շատ լավ են անում:

Ահա այդ ձևն էլ պիտի որինականացնել, նոր մաշտոցից բուրովին հանելով տներում կատարվող ծեսը, յեկեղեցում կատարվող մասն էլ վորոջ փոփոխության յենթարկելով:

Հասի ու Հհասի խնդրում հայոց յեկեղեցին անպայման համաձայնության պիտի գա զագսի ընդունած աստիճանների հետ. մենք չենք կարող, մենք իրավունք չունենք պետական որոշում որինսովոր ճանաչված ամուսնությունը ապրելիս ընդունել:

Չնոնադրությունը նույնպես, վորպես յեկեղեցու խորհուրդ, մեծ փոփոխության է կարոտ, հիմք ընդունելով դարձյալ ավետարանը և առաքելական-քրիստոնեություն նախնական շրջանի կարգը: Այս մասին հանգամանորեն կը խոսվի յեկեղեցու պաշտոնեություն վերաբերյալ գլխում:

Ե. — Սրբազան արարողություններ յեվ հոգևոր ավանդություններ. — Սրբազան արարողությունների մեջ գլխավոր տեղը բռնում է ննջեցյալներու թաղումը, վորի համար մաշտոցի մեջ վորոշ կարգ կա սահմանված — տղայաթաղ, մեծի թաղում և քահանայաթաղ: Այս նշանակում է, վոր յերեք կարգերի մեջ վորոշ տարբերություններ կան. մասնավոր է տարբերությունը տղայի և մեծի թաղման կարգերի մեջ, իսկ այս յերկուսի և քահանայաթաղի մեջ վորոշ միայն ահագին տարբերություն կա, այլ և բոլորովին նման չեն:

Ինչի՞ համար, ինքս ինձ հարց եմ տալիս:

Մարդկանց վիճակի տարբերություն է թե իսկական պատճառն է, իմ հարցիս պատասխանը չեմ ստանում, վորովհետև այդ տարբերությունը նրանց հոգեկանի ու մտավորականի մեջ պետք է փնտրենք, այստեղ մարմինները վո՞չ մի դեր չեն խաղում: Յերբ հոգին, մարդին բացասական, կամ դրական արժանիք տվող, նրան մարդ անուն տվող եակը բաժանվել է նրանից, մնացածը այլևս մարդ չէ, այլ նրա դիակը, մի հողագունդ, մենք պատվում ենք, պիտի պատվենք այդ մարդին կյանք ու կենդանություն տվող, այս կամ այն գործողությունը թելադրող հոգուն և մտքին, վոր սակայն մահվան դեպքում այլ ևս գոյություն չունին նրա մեջ: Ուրեմն՝ մարդկանց տարբերող գործոնները վերացել են, բաժանվել են նրանից, նա, վո՞չ թե մարդը, այլ դիակը, ավելի ուղիղը մարդկանց դիակները, ումը և լինին, միմյանցից վո՞չնչով չեն տարբերվում, պարզ դիակներ են, հետևաբար և վո՞չ մի հիմք չկա այդ դիակների թաղման կարգերի մեջ վոր և է տարբերություն դնել:

Սակայն քահանայաթաղը մի ամբողջ գիրք է, ավետարանից էլ մեծ, քահանայի, առհասարակ կարգավորի դադար իրավունք չունին աշխարհականները վերցնել. կարգավորի գիակը յեկեղեցում հանդիսավոր ոծում են: Մենք հակառակ ենք մինչև անգամ ձեռ-

նադրության ժամանակ կատարվող ոծմանը, ինչպես կտեսնեք յեկեղեցական պաշտոնյաներին վերաբերյալ գլխում. մասնավոր հակառակ ենք ու բոլոր սրտով բողոքում ենք դիակի ոծման դեմ՝ նույն պատճառաբանությամբ: Կենդանի մարդու ոծումը շնորհաբաշխումն է, վորով ա. հոգին իջնում է ձեռնադրվողի վրա, տալիս է նրան շնորհք քարոզելու և սրբազնագործելու: Ի՞նչ միտք, ի՞նչ խորհուրդ ունի դիակի, հողացու գնդի ոծումը:

Յեվ վո՞չ մի:

Մի՞թե վերջին դատաստանի որը այդպիսի ոծյալ կարգավորներին առանձին տեղ է տալու փրկիչը: Մենք տեսանք, վոր նա ուրիշ պահանջներ է դնում դատվողների առաջ:

Քահանան չէր, վոր Սամարացու առակի մեջ առաջին դատապարտյալը յեղավ:

Մեռելներին ոծելը, նրանց թաղման կարգի մեջ տարբերություն դնելը հակաավետարանական՝ հեթանոսական սովորություն է, ուրեմն իսպառ վերացնելու և շատ պարզ ձև է տալու այդ կարգին:

Բայց յերբ թաղում ենք արժանավոր մարդու, արժանավոր պաշտոնյայի, արժանավոր հասարակական գործիչի, այն ժամանակ թաղմանը հանդիսավորություն ենք տալիս վո՞չ կարգի ընդարձակություն, այլ արտաքին շուքով, դամբանականներով, դրուատելով նրա արժանավորությունները, կատարած գործերը:

Չմոռանանք փրկիչ խոսքը, ուղղած իր աշակերտին, վոր ուղում եր գնալ հորը թաղելու, ասում է. «յեկ զկնի իմ, թույլ տուր մեռելոցն թաղել զմեռյալ յուրյանց»:

Մեր բոլոր աշխատանքը, մեր բոլոր պաշտոնը, ավետարանը, քարոզը, աղոթքը, խնդրվածքը, վարձքը, պատիժը՝ միմիայն կենդանի մարդի համար են, ինչպես և աստված՝ «չէ աստված մեռյալ, այլ կենդանի»:

Թաղման կարգը անհրաժեշտ է պարզել.

ա. յերբ մեռնողը մահուկ է, (մինչև 5 տարեկան) տանը միայն հոգվոց ասել, կառքով, կամ ինչպես հարմար կլինի, տանել գերեզմանատուն, որհնած հողը դադարի մեջ ածելով թաղել, առանց փառքի բարձունս յերգելու:

բ. յերբ մեռնողը պատանի (6 տարեկանից սկսած) կամ հասակավոր է, կարելի չէ պատարագով, կամ առանց պատարագի թաղել. այդ կախված է տեղերից, վորովհետև պատարագը կապված է վորոշ ծախսերի հետ: Յեթե պատարագով է, տան կարգը կատարել (բարեփոխված), քահանայով, կամ քահանաներով տա-

նեկ յեկեղեցի, պատարագ մատուցանել, վերջը հոգևոց ասելով միայն վերցնել և կառքով կամ առանց կառքի, այդ ել տերերից ե կախված, ուղարկել գերեզմանատուն առանց քահանայի, վորտեղ հերթապահ քահանան կը թաղի սահմանված կարգով. իսկ յեթե քահանան մեկ ե, գերեզմանատունը չունի հերթապահ քահանա, քահանան ննջեցյալի հետ գնում ե գերեզմանատուն առանց շուրջառի, գերեզմանատանը կատարում ե թաղման կարգը ու վերջացնում, առանց գերեզմանը կնքելու, վորպես իր նշանակութունը կորցրած արարողութիւն, վորովհետեւ Սորհրդային իշխանութիւնը «անշարժ» գերեզման չե ընդունում. նա տեր ե գերեզմանատան, ուրեմն և գերեզմանների. յերբ և ինչպես կկամենա կվարվի նրանց հետ, ամենեւին կարևորութիւն չտալով թե՛ յեկեղեցու կարծիքով գերեզմանները անշարժ են:

Գերեզմանատանից քահանան ննջեցյալի տուն չի վերադառնում: Սուրբ սեղանը վերանում ե. յեթե ննջեցյալի տերը անպատճառ ցանկանում ե, ուղարկում ե յեկեղեցի, վորտեղ քահանան բաժանում ե աղքատներին:

Այսպես պիտի թաղվի ամեն կարգի ննջեցյալի թաղումը, լինի աշխարհական թե հոգևորական: Այս առթիվ առանձին կը խոսվի հետեյալ գլխում:

Տնորոնները հոգևոր այցելութիւն նշանակալից առիթ ե. աստվածահայտնութիւն և հարութիւն տոները առատ նյութ յեն տալիս հոգևոր հովիւին՝ զրուցադրելու, հորդորելու, խրատելու, քրիստոնեական վեճ դադափարներն արծարծելու և իրանց հավատքի մեջ հաստատելու հոտին: Այս պատճառով քահանան այցելում ե իր հոտին՝ ծննդյան տոնին ութ որ ունենալով իր արամադրութիւն տակ, հարութիւն տոնին՝ ամբողջ քառասուն որ՝ մինչև համբարձում՝ միայն փորվարով, առանց տիրացուի ե որհնում տները և առանց նշխարի:

Վոտնալվայի ձեւը մնում ե, առանց կարագ բաժանելու, վոր միայն անկարգութիւն և առաջ բերում յեկեղեցում:

Մնացած բոլոր սրբազան կոչված արարողութիւնները յեվ հոգեվոր ավանդութիւնները վերանում յեն՝ հանվում յեն մաշտոցից, ինչպես ավետարանի և կրոնի իմաստը և վոգին աղավաղող սնտոխաղաշտութիւններ:

Սոր տոմարի խնդիրը լուծված պետք ե համարել և ամենուրեք պարտադիր՝ վորպես համեմատաբար ամենաուղիղ աստղաբաշխական հաշիվ և ընդունված բոլոր լուսավոր յերկրներում:

Հայոց յեկեղեցին՝ ամենայն հայոց կաթողիկոսի կարգադրութեամբ ամեն տեղ ընդունել ե նոր տոմարը՝ անշան բացառութեամբ, այդպես պետք ե լինի և Սորհրդային Միութիւն մեջ, մանավանդ վոր քաղաքական իշխանութիւնն ե, քաղաքական կյանքի մեջ ընդունել ե այդ տոմարը: Սորհրդային Միութիւն մեջ վրացի և ռուս յեկեղեցին նախ ընդունեցին, ապա նորից հսին անցան. նրանց որացույցները շփոթութիւն յեն առաջ բերում հայերի մեջ. անհրաժեշտ վոր ս. Եջմիածինը բազմաքանակ որինակներով եփան որացույց տպե և տարածե Սորհրդային Միութիւն մեջ՝ այդ շփոթութիւն առաջն առնելու համար:

Հարգելի պատգամավորների վրա մեծ պարտավորութիւն ե ընկնում, վոր յուրաքանչյուրը իր շրջանում, իր համայնքին ներշնչի, համոզի հնազանդվել ամենայն հայոց կաթողիկոսի կարգադրութիւնը, վոր տեղի յե ունեցել բազմաթիվ դիմումների և պարբերաբնների հետ ունեցած խորհրդակցութիւնների հետևանքով:

Գ. Աստվածպաշտոյան պաշտօնութիւնը:

Այն, ինչ վոր մինչև այսօր անվանվում ե յեկեղեցու նվիրապետութիւն ավետարանի վոգին մերժող, առաքելական համայնական կարգը զրժող իրավակարգ յե: Յեկեղեցու հիմնադիրը, իսկական գլուխը՝ մեր փրկիչը իրան անվանեց՝ «հովիվ քաջ, վոր գնե զանձն յուր ի վերա վոչխարաց»: «Հովիվ» և «պետ» կամ «իշխան»՝ միմիայնց մերժող գաղափարներ են. հովիվը սիրող հայր և յեղբայր ե յուրայինների համար, պետը կամ իշխանը՝ հրամայող բռնակալ ե, անմերձենալի՝ ստորագրեցալների համար: Ավետարանի յեղբայրութիւն մեջ ստորագրելութիւն չկա. Գաջ հովիվը, սիրող հայրը՝ բռնակալ պետ և իշխան դարձավ այն որից, յերբ յեկեղեցին պետականացավ. այն որվանից, յերբ առաջ յեկավ յեկեղեցու նվիրապետութիւնը. հոգևոր յեղբայրութիւնը, հոգեվոր կառավարութիւնը տեղի տվեց հոգևոր իշխանութիւնը:

Պետականացած յեկեղեցին իր վրա վերցրեց — յուրացրեց պետականութիւն ռեժիմը, կարգերը, ձևերը, դարձավ կայսեր գործակալը և գործիքը: Ահա այդ որվանից ել յեկեղեցին կորցրեց, մերկացավ յուր հմայքը: Ժիշտ ե՝ հոգևորականը զգեցավ ուրույն՝ փարթամ տարագ, աշխարհականից խիստ տարբեր, վոր այժմ միայն ծիծաղ ու հեղնանք ե առաջ բերում, բայց այդ տարադի տակ ընդունեց խիստ պոլիցիական ռեժիմ, վոգի, իրավակարգ:

Փրկիչը, յեկեղեցու հիմնադիրը՝ իր մերձավորներին և ում հետ առիթ էր ունենում խոսելու՝ ընկեր էր անվանում. այո, ընկեր, մի գարմանաք. այս անունը, ինչպես և յեկեղեցին պետութայնից բաժանելու գաղափարը՝ մեր խորհրդայինների կողմից նորութուն չեն, և իդուր մարդիք, յերբ նրանց ընկեր են անվանում, խրտնում, նույնիսկ վիրավորվում են ու բողբոջում — «միթե յես քո քնկերն եմ»: «Ընկեր» և «յեղրայր» միևնույն իմաստն ունեցող բառեր են:

Փրկչին՝ թե աշակերտները և թե ուրիշները «Տեր» են անվանում: Նրա մոտ առանձին ընդունելութան ժամեր չկային. նրա մոտ ամեն ժամանակ ազատ մուտք ունեին «ամենայն վաստակյալք և բեռնավորք»: Նա նույն իսկ սեփական տուն չուներ, վոր մտածեր ընդունելութան ժամեր նշանակել: «Ազվեսաց վորջ գոն, և թոչնոց յերկնից բույնք, այլ վորդվոյ մարդոց վոչ գո ուր դիցե զգլուխ յուր»: (Մատթ. Ը 20):

Իսկ այժմ՝ մենք մեր մեծերին, Քրիստոսի փոխանորդներին՝ անվանում ենք՝ նորին բարձրապատվութուն, գերապատվութուն, բարձր սրբազնութուն, նորին ոծութուն, վեհափառ տեր, սրբազնասուրբ հայրապետ, ևն, ևն: Մեր մեծերի մոտ գնալիս՝ շատ անգամ ընդունելութան չենք արժանանում, և յեթե յերկար սպասելուց հետո մի կերպ արժանանում ենք, ցավ ի սիրտ պիտի ասեմ, վոր՝ վորքան ել յերկար տեի մեր խոսակցութունը, պարտավոր ենք փրկնով կանգնած մնալ և աչքներս գետնին հառած խոսել: Յեվ յեթե պատահի, վոր՝ վորեւ աշխարհական լինի ներկա, կամ այդ միջոցին ընդունելութուն գտնի, նա հրավիրվում և նստել՝ այնպես խոսել, դեռ պատվի յեկ և արժանանում: Ու չե յիլ մտածվում, վոր այդպիսով՝ քահանայի վարկը, պատիվը աշխարհականի մոտ իրանք են գցում. և շարունակ գցել են, պատվազուրկ են արել:

Քահանան յերբ ս. Եջմիածին է գնում, իրավունք չունի տաճարում փրկոն ծածկել. պատարագ մատուցանելու մասին խոսք անգամ չի կարող լինել: Վերջերս միայն փրկոն ծածկում են առանձին թույլտվութամբ, իսկ պատարագ մատուցանելը հազվագյուտ դեպք է:

Իսկ յերբ մի վարդապետ, յերիտասարդ վարդապետ՝ արեղա, այսինքն նորընծա վարդապետ գա մեզ մոտ, մեր յեկեղեցիները, նա իրավունք ունի ամենածեր քահանայի ել բարձր կանգնել. ամենքն ել պարտավոր են գլուխ խոնարհել նրան, սպասավորել, և վնչ միայն յեկեղեցում, այլ և գրուր:

Յեթե գավառից քահանա յե գալիս առաջնորդանիստ քաղաքը, գործով, յեկեղեցական-պաշտոնական գործով, նա յերբեք չի կարող յերազել, վոր ոթևան կունենա ընդարձակ առաջնորդարանում. իսկ յերբ մի՝ նույն իսկ անհայտ վարդապետ գա, առաջնորդարանում գրկարաց տեղ ունի:

Գուցե կհարցնեք՝ ինչի՞ համար, հանուն վոր գաղափարի քահանան այդքան ցած է, ստոր է մի վեղարի առաջ. ինչի՞ համար՝ Եջմիածնի տաճարում՝ կուսակրոն դասի շարքում տեղ չունի, փրկոն ծածկել չի կարող նա: Իսկ ծխական յեկեղեցում՝ վեղարավորին և պատկանում ամենաբարձր տեղը:

Ավետարանը, նախնական քրիստոնյական յեկեղեցին դրա պատասխանը չունի:

Դրա իսկական պատասխանը յեկեղեցու նվիրապետութունն է, նվիրական պետութունն է:

Քրիստոսի յեկեղեցի և պետութուն:

Իրար չեն կաշում. ամենեին չեն կաշի:

Սակայն վնչ այնպես, ինչպես մի որ՝ յերջանկահիշատակ Խրիմյան Հայրիկն ասաց. «ուսյալ քահանան գյուղին չի կալի»:

Այո, հարգելի պատգամավորներ, յեկեղեցու նվիրապետութունը չի ցանկացել ուսյալ քահանա տեսնել գյուղում՝ շատ տխուր պատճառաբանութամբ:

Բարեբախտաբար՝ յեկեղեցին պետութունից բաժանող պատմական դեկրետը վերջ դրեց և յեկեղեցու նվիրապետությանը, յեկեղեցին հանձնելով իր իսկական տիրոջը — հավատացյալ համայնքին — ժողովրդին, ուրեմն՝ այլևս չե նվիրապետական, այլ ժողովրդավարական: Իսկ հոգևոր դասը յե՝ միմիայն յեկեղեցու պաշտոնություն, համայնքի հոգևոր սպասավորություն, ընտրված համայնքից, կամ համայնքների միությունից, նայելով թե ինչ պաշտոնի համար և ընտրվում:

Յեկեղեցու պաշտոնյաներն են՝ ժամակոչ, դպիր, սարկավագ, քահանա, յեպիսկոպոս և կաթողիկոս:

Ժամակոչ յեվ դպիր ընտրվում են ծխական խորհուրդները ավագ-երեցի համաձայնությամբ՝ անվորոշ ժամանակով՝ վորքան պիտանի կլինեն յեկեղեցուն, վորքան կհամապատասխանեն իրանց վրա դրած պարտավորութուններին և համապատասխան ցենզ պիտի ունենան:

Սարկավագը ընտրվում է յեկեղեցու համայնքից ծխական խորհրդի և ավագ յերեցի առաջարկությամբ՝ դարձյալ անվորոշ ժամանակով՝ քահանայական ցենզով:

Քահանային նույնպես ընտրում ե յեկեղեցու համայնքը — ծխական խորհրդի առաջարկութեամբ: Քահանայի ընտրութիւնը հաստատում ե թեմական-յեկեղեցական խորհուրդը, վորից հետո միայն առաջնորդ յեպիսկոպոսը ձեռնադրում ե նրան՝ առանց ոճումի, վորովհետեւ ոճումը յերկրորդ մկրտութիւն ե, վոր քրիստոնյական յեկեղեցու դավանութեամբ անթույլատրելի յե համարվում: Մահվան ժամանակ ոճման անտեղիութեան մասին արդեն խոսված ե վերև:

Քահանան ընտրվում ե վոչ ցմահ, այլ վորոշ ժամանակով, որինակ 4, 5, 6 կամ 7 տարով: Քահանայութիւնը հովվական ե սրբազնագործ պատասխանատու պաշտոն ե, ամենածանրը ե ամենապատասխանատուն: Կարող ե նա չարդարացնել իր վրա դրած հույսերը, ուրեմն՝ մինչև մահը յեկեղեցու համար պատիժ չպետք ե մնա. նա անպայման քարոզիչ պիտի լինի. իր բոլոր՝ այլ բարեմասնութիւններով հանդերձ, յերբ նոր յեկեղեցու այդ անհրաժեշտ պահանջը չբավարարե, այդպիսի քահանան անպետք կը համարվի. պետք ե հեռացվի ե ավելի հաջող քարոզիչ ընտրվի: Յեկ վորպես զի չը վերընտրվելու դեպքում յեկեղեցու վրա անտեսապես բեռը չհամարվի, պաշտոնի ժամանակ միայն հոգեւոր տարազ պիտի հագնե, իսկ պաշտոնից ազատ ժամերում նա ազատ քաղաքացի յե՝ քաղաքացու տարազով ե ամեն տեսակ պարագմունքով, հետեւարար ե չը վերընտրվելու դեպքում կը շարունակե իր աշխարհիկ գործը, անտեսապես չի տուժի:

Ձեռնադրութիւնը ցայտոր կատարվել ե պատարագով: Պատարագը անհրաժեշտ պայման չպիտի համարվի, վորպիսի որինակը գործնականի մեջ ցույց տվեց անցյալ տարի՝ գերագույն խորհրդի անդամ՝ Յերեանի թեմի առաջնորդ արքեպիսկոպոսը: Պատարագով ձեռնադրութիւնը կախված պիտի լինի ձեռնադրվողի ցանկութիւնից, վորովհետեւ կապված ե վորոշ ծախսերի հետ:

Ամուսնութիւնը պարտադիր չպետք ե լինի, այլ ցանկալի ե թույլատրելի՝ ամեն կարգի յեկեղեցականի համար—քահանա, յեպիսկոպոս, կաթողիկոս—ճիշտ աշխարհականի իրավունքով. կամենում ե՝ ամուսնանում ե, չե կամենում, պահանջ չե զգում, չի ամուսնանում: Ուրեմն՝ ձեռնադրվող քահանայից չպետք ե հարցնել՝ ամուսնացած ե թե վոչ: Բայց յեկեղեցու պաշտոնյան—քահանա, յեպիսկոպոս, կաթողիկոս—յերբ իրան զգում ե զայթակղութեան առաջ կանգնած՝ պարտավոր ե ամուսնանալ. հակառակ դեպքում պետք ե հեռանա ասպարիզից:

Քահանայի առաջ բաց ե ասպարեզը դեպի յեպիսկոպոսութիւն ե կաթողիկոսութիւն, յեթե այդ պաշտոններին համար արժանիքներ կը ցուցադրեն:

Յեպիսկոպոսութիւնը թեմ կառավարելու պաշտոն ե իրեն նախագահ թեմական-յեկեղեցական խորհրդի, ուստի ընտրվում ե թեմական պատգամավորական ժողովից: Առաջնորդական թեկնածուներ են՝ արժանավոր քահանաներ, աշխարհականներ ե քարոզչական ընդունակութեամբ ե այլ արժանիքներով հռչակված ուխտյալ վանականներ՝ աշխարհիկ հոգեւորականի վիճակում:

Թեմական առաջնորդն ել ընտրվում ե վորոշ ժամանակով. չը վերընտրվելու դեպքում հրավիրվում ե եջմիածին՝ յեթե այնտեղ յեպիսկոպոսի կարիք լինի, հակառակ դեպքում մնում ե ազատ քաղաքացի, կամ քաշվում ե վանք: Ուրեմն՝ պաշտոնի մեջ ել ոգտվում ե ազատ քաղաքացիական բոլոր իրավունքներով:

Կաթողիկոսը կառավարում ե համագլխային յեկեղեցին՝ իրեն նախագահ գերագույն հոգեւոր խորհրդի, ուստի ընտրվում ե համագլխային յեկեղեցական ժողովից՝ վոչ ցմահ, այլ վորոշ ժամանակով: Կաթողիկոսական թեկնածուներ են՝ արժանավոր քահանաներ, յեպիսկոպոսներ, աշխարհականներ, ուխտյալ վանականներ: Կաթողիկոսն ել ոգտվում ե քաղաքացիական բոլոր իրավունքներով. չը վերընտրվելու դեպքում՝ մնում ե ս. եջմիածնում՝ վորպես պատվավոր անդամ. կարող ե ե թեմական առաջնորդ ընտրվել:

Ձեռնադրութեան ժամանակ առանձին շեշտով նդովում են՝ ընդունված դավանութեան հակառակ հայացք, տարբեր համոզմունք ունեցողներին, անվանելով նրանց հերետիկոս, կամ հերձվածող՝ համաձայն տիեզերական ժողովների վորոշման: Այս մի՛ անվորակելի հակաքրիստոնեական կարգ ե, Քրիստոսի վարդապետութիւնը հիմնապես աղավաղող սովորութիւն ե: Հապա վորտեղ մնաց Քրիստոսի պատվերը—«սիրեցեք զթշնամիս ձեր»:

Ուրիշներին դատելը մինչև անգամ արգելում ե մեր փրկիչը — «մի դատեք, զի մի դատիցիք», ինչպես թույլ կտա նա նդովել հակառակ համոզմունք ունեցողներին: Այս բավական չե. վորպեսզի ձեռնադրվող յեպիսկոպոսը այդ նդովքին հավատարիմ ընթացք ունենա, ձեռնադրութեան ժամանակ յերգվեցնում ե զրավոր յերգումն են ստանում նրանից:

Իսկ փրկիչն ասում է — «ամենեին մի յերդմնուցում»:

Տեսնում եք, հարգելի պատգամավորներ. Բրիտտոսի յեկեղեցին՝ Բրիտտոսի պատվերներին միանգամայն հակառակ ընթացք է բռնել՝ հենց չորրորդ դարից սկսած: Ավետարանի ազավադումով յեկեղեցու խորհուրդ է խմբագրվել: Անհրաժեշտ է՞ այդ ազավադումները վերացնել: Յեկեղեցին պետք է և պարտավոր է ավետարանի հավատարիմ արտահայտիչը լինել. ավետարանի մաքուր վոզին պետք է թագավորե յեկեղեցու մեջ:

Յեպիսկոպոսի ձեռնադրությունը ամենահանդիսավորն և բո-
լոր ձեռնադրությունների մեջ: Պատարագիչը ամենայն հայոց կա-
թողիկոսն և նրան սպասավորում են յեպիսկոպոսներ և արքե-
պիսկոպոսներ: Յերբ հասնում և յեպիսկոպոսացուների ոծման
ժամը, պատարագիչ վեհապառ կաթողիկոսը բազմում և բազկա-
թոռի վրա — յոթնասուրճանյան սեղանի վրա — խորանից չոքեչոք
մոտենում են յեպիսկոպոսացուները սահմանած յերգեցողությամբ,
իսկ նրանց առջևից գնում են ժողովրդի բոլոր խավերից ներկա-
յացուցիչները, վկայում են նրանց արժանիքները և ժողովրդա-
կան բնորությունը:

Սակայն այս բոլորը իրականությանը չեն համապատասխանում, վորովհետեւ վաղ՞ուց եւ, շատ վաղուց ե՛մեր միջ յեպիսկոպոսները, հակառակ առաքելահաստատ կանոնների՝ ընտրությամբ չեն ձեռնադրվում, այլ ամենայն հայոց կաթողիկոսը ում կամեցել եւ, ձեռնադրել եւ, ում չի կամեցել, վորքան եւ արժանավոր լինեք, չի ձեռնադրել: Այսպես յեղել եւ մինչեւ այսօր ոունաստանի սահմաններում՝ պոլոթենյայի շնորհիվ, ընտրությամբ ձեռնադրվել եւ ձեռնադրվում են արտասահմանի—տաճկահայ աղգալին սահմանադրության սահմաններում գտնվող թեմերի ընտրչալ առաջնորդները: Նրանք իրանց հետ բերում են իրանց ընտրության վկայականը եւ ձեռնադրվում են: Այստեղ ամենայն հայոց կաթողիկոսի կամքը դեր չի խաղում: Այնուամենայնիվ ձեռնադրության ժամանակ շարան-շարան մոտենում են ժողովրդական ներկայացուցիչներ — կատարչալ դերասաններ, վորով ցուցադրվում եւ մի վրդովեցուցիչ կեղծիք, սրբազան կեղծիք:

Անհրաժեշտ է ձեռնարկություն սուրբ խորհուրդը մաքրել
աղավաղումներից և կեղծիքներից և պարզ ձևի վերածել:

Յեւ վաճառի վոր ծրագրովում և, վոր աշուհեան վարոյ ժամանակով ընտրվեն յեկեղեցու բոլոր կարգի պաշտոնյաները, վորոնք իրանց մասնավոր կյանքում մնալու յեն ազատ քաղաքացիներ,

գուցե այդպես ել մնան՝ չվերընարվելու դեպքում, այդ հանդիսա-
վոր ձեռնադրությունները, ինչպես և ոժուժը ավելորդ չէ՞ս: Յերբ
ընտրվողը աշխարհական է, նրա ձեռնադրությունը՝ քահանայական
ձեռնադրության ծավալով և հասկանալի և անհրաժեշտ է, իսկ
յերբ ընտրյալը քահանա չէ, կա՞մ ուխտյալ վանական, նոր ձեռ-
նադրությունը միանգամայն անհասկանալի և անխորհուրդ է:
Այդ դեպքում բավական է միայն հայրապետական կոնգակով հաս-
տատել ընտրությունը՝ գերագույն հոգեոր խորհրդի սանկցիան
ստանալուց հետո:

Յայտպես պետք է նայել և կաթողիկոսի ընտրության հաստատությանը՝ համադրելովն ժողովի վկայականով:

VII. Աստվածպաշտոյան սրբազնագործ պաշտոնյաների
սարազը, ճնշեաւական, իրաւական յեղ հաստատեալան
դիրքը — վիճակը.

Յեկանք, հասանք յեկեղեցու վերակենդանացման—հիմնական բարեփոխութեան ամենակարգինալ հարցին—քահանայական խնդրին։ Քահանան և յեկեղեցու հոգին, յեկեղեցուն կյանք և կենդանութիւն տվողը. քահանան և մինեուն ժամանակ և յեկեղեցու մեղսողը։ Ուրեմն՝ յեկեղեցին կենդանացնելու համար, յեկեղեցին միշտ կենդանի պահելու համար մեր ուշադրութիւնը պիտի դարձնենք՝ ա. քահանայի ցնեղի վրա. բ. նրա բարոյականութեան վրա. գ. նրա անպայման քարոզչական ընդունակութեան վրա և դ. իր պաշտոնին, իր կոչումին՝ չորպէս կյանքի նպատակ, կյանքի խորհուրդ նաշողի և դավանողի վրա։ Ով աչս հորս պայմանին համապատասխանի, նա միայն կարող և լինել մեր ծրագրած նոր՝ կենդանի յեկեղեցու քահանա։

Ասում են՝ քահանան առնվազն միջնակարգ կրթություն պիտի ունենա, ուրեմն՝ ջանկարի եւ, վոր՝ և բարձրագույն կրթություն ստացած լինի:

Իսկ յետ արուամ եմ^ս աշգ ըսովական չե:

Մենք ունեւոյնք թիմական հոգեւոր գալորցներ, ունեւոյնք Գեւորդոյան ճիմարան, գրանք բոլորն եւ իրենց ծրագրով՝ կէս աշխարհիկ, կէս հոգեւորական, ապիւր ուղիով՝ վրջ աշխատելու, աշխատելու ներկայացնող ծրագրով, մեզ չտալին իսկական քահանայ:

Ավետարանական գիտություն, հին ուխտի գիտություն, հին
և նոր փիլիսոփայություն, պատմություն՝ ընհանրապես, կրոնների

և նրանց ստորաբաժան գավառաթյունները պատմութիւն՝ մասնավորապէս, յեկեղեցագիտութիւն և հոգեւորութիւն: Յեւ յեթե սրանց վրա ավելացնենք յերգ և յերաժշտութիւն, այն ժամանակ կամբողջանա այն ցենզը, վոր անհրաժեշտորեն պահանջելի է նոր՝ կենդանի, Քրիստոսաշունչ յեկեղեցու պաշտոնիայից:

Սովորաբար գյուղական քահանաներից պահանջվում է փոքր ցենզ, նկատելով վոր բարձր ցենզ ունեցողը գյուղ չի գնալ, գուցե դրա համար Խրիմյան Հայրիկն ասաց — «ուսյալ քահանան գյուղին չկալիր»: Դա մեծ սխալ է: Ընդհակառակը ամենամեծ ուշադրութիւնը գյուղին պիտի դարձնենք. նայեցեք չորս կողմերդ, տեսեք ի՞նչ աշխատանք է գործ գրվում գյուղի համար: Այնտեղ թույլ չպիտի լինի և մեր աշխատանքը: Ճշմարիտ է՝ գյուղերը, աննշան բացառութեամբ անկարող կլինեն մի-մի արժանավոր քահանա ունենալ, սակայն մի խումբ գյուղեր, կամ մի վորոշ շրջանի գյուղեր՝ անշուշտ կարող կլինեն պահել մի ցենզավոր քահանա: Հարկավոր է միայն ցանկանալ, աշխատել և կազմակերպել:

Վորովհետեւ քահանան պաշտոնից ազատ ժամերում ազատ քաղաքացի չէ՝ քաղաքացու բոլոր գործերով ու արհեստներով, վորքան գրավիչ կլինի գյուղական մի շրջան, յերբ այնտեղի քահանան ուսումնասիրած լինի և գյուղատնտեսական մի վորոշ ճյուղ, կամ բժշկութիւն ու նրանով պարապի իր շրջանում:

Հնարավոր է այժմ մեր ուզած քահանան ունենալ: Անհնար չէ. նույն իսկ կարելի չէ:

Անհրաժեշտ է մի հայտնի կենտրոնում հիմնել աստվածաբանական ճեմարան՝ վերե թված առարկաների ծրագրով. իսկ տեղերում՝ յեղած քահանաներին կրթելու, դաստիարակելու, նրանց՝ նոր պաշտոնի համար պատրաստելու դասընթացքներ բաց անել կենտրոնական յեկեղեցիներում ու շարունակ աշխատել և աշխատեցնել. որինակ առնենք մեր շրջապատից՝ ինչպէս են աշխատավորներ պատրաստում նոր իրավակարգի համար. բանվորը մինչև անգամ՝ իր՝ որական պարտադիր աշխատանքը վերջացնելուց հետո՝ յերեկոները բանֆակ է հատուկ կլուրներ և հաճախում՝ սովորելու համար: Մեր քահանաները պիտի աշխատեն, պիտի սովորեն, վոր կարողանան պիտանի լինել յեկեղեցուն և համայնքին՝ մեր իրավակարգերում:

Յեւ արդարեւ ի՞նչ նշանակութիւն կունենա ավետարանական վոգով բարեկարգված, բարեփոխված յեկեղեցին՝ առանց համապատասխան պաշտոնյաների — քահանաների: Յեւ միթե կարելի չէ

առանց այդպիսի քահանաների բարեկարգել յեկեղեցին: Վոչ՝ Դուք տեսէ՛ք եք, վոր մի հիմնարկութեան մեջ պաշտոնականապէս պաշտոն տան անփորձ, այդ պաշտոնի համար չպատրաստված մարդու. չեք տեսել: Ամեն հիմնարկութեան գլխին կանգնած է անպատճառ մասնագետ, սպեց զեկավար: Բայց իհարկէ վոչ մեր հայկական իրականութեան մեջ: Մեզանում նոր դպրոցավարտը առանց պահանջված ստաժի կարող է իսկույն քահանա դառնալ. գրկաբաց կնդուռն են նրան: Մեր իրականութեան մեջ նոր համալսարանավարտը կարողանում էր և թեմական հոգեւոր դպրոցի և Գևորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ դառնալ, առանց մանկավարժական և դպրոցական-վարչական պատրաստութեան. ել չեմ ասում առանց յեկեղեցական-կրօնական գիտելիքների հմտութեան: Պարզ է, վոր՝ և դպրոցը, յեւ յեկեղեցին կտուժեցին, ու տուժում ելին: Վոչ թե գործի համար մարդ էր վնասվում, այլ մարդու համար գործ:

Քահանայացուի համար՝ քահանայական ցենզի հետ և ծառայական վորոշ ստաժ-դպրութեան կամ սարկավարութեան պաշտոնով՝ անհրաժեշտ պայման պետք է լինի:

Բայց վորպեսզի քահանան՝ իր վրա դրած ամենատեսակ հույսերն արդարացնի, պիտի ազատ լինի ներկա մուրացիկ վիճակից, նա տնտեսապէս անկախ և իրավապէս պարզ, բացորոշ վիճակ պետք է ունենա: Սրբազնագործ պաշտոնը պետք է կատարի ճրի, հոտի, ծխի անդամների հետ փողի հաշիվ չպետք ունենա. իսկ ծառայութեան համար՝ վորպէս պաշտոնյա՝ վորոշ և բավարար ոտճիկ պիտի ստանա յեկեղեցուց, հիմնարկութեանից, վորպեսզի սպորուստի հոգսից բոլորովին ազատ լինի և բոլոր հոգով, բոլոր սրտով և մտավոր ամբողջ կարողութեամբ նվիրվի իր պաշտոնին:

«Ձրի առեք և ձրի տվեք», ասում է փրկիչը:

«Մշակն արժանի չէ վարձու յուրո», դարձյալ ասում է փրկիչը:

Քահանան պարտավոր է ամեն շաբաթ-կիրակի և տոն օրերին ավիտարանական պատշաճ քարոզներ խոսել, այցելել ծխերին, միթիթարել, խրատել, հորդորել, քաջալերել. կազմակերպել դասախոսութիւններ, հոգեւոր համերգներ. ինչպէս կարողանա պատրաստվել այս բաղմատեսակ գործունեյութեան համար, յեթե նա ստիպված պիտի լինի ամեն օր ապրուստի հոգսի հետեւից ընկնել, զաւակները կրթութեան հետեւել:

Նրա գուռը բաց պիտի լինի որվա բոլոր ժամերին և պիտի համարի ամենքին. բայց հնարավոր է այդ ամենը, յեթե նա այսուրեւ մուրացիկ վիճակի մեջ չը մնա:

Դուք գիտե՞ք հարգելի պատգամավորներ. ձեզ հայտնի է ինչպես ե ապրում ձեր քահանան. ավելի ուղիղը՝ ապրում ե արդյոք իր բաղմանդամ ընտանիքով: Յեթե չգիտեք, յեթե այդ ձեզ հայտնի չե, ձեզ համար մեծ պակասություն ե, իսկ յեթե գիտեք ու լուր եք, գիտեք ե անտարբեր եք, դա արդեն մեծ հանցանք ե ձեր կողմից:

Քահանայից շարունակ պահանջող լինել, բայց նրա կարիքներին անգետ մնալ, հանցանք չե, հապա ի՞նչ ե:

Անհրաժեշտ ե ազատել քահանային մուրացիկ վիճակից. ինչպես կարող ե մուրացիկը խրատել, հորդորել, քարոզել, յեկեղեցին կենդանի պահել: Չե կարող:

Նախնական յեկեղեցում այնպես չեր, ինչպես այժմս ե. ծուխը յեկեղեցունն եր. ե յեկեղեցու քահանայական ամենատեսակ հասույթները գանձվում եյին յեկեղեցում, ապա արդարությունը բաժանվում եր յեկեղեցու պաշտոնյաների մեջ՝ համաձայն նրանց վարած պաշտոնի, աստիճանի: Քահանաները հերթով եյին կատարում ծխական գործերը—որինակատարությունները. նրանք հավասարապես շփվում եյին ամբողջ համայնքի հետ. իմ ե քո ծուխ չկար. չկային ուրեմն ե հասույթի ու ծխականի վեճեր:

Սակայն՝ յերբ Հայաստանի քաղաքական անկախությունը վերջացավ, բաժան-բաժան յեղավ հզոր հարեանների մեջ, պարբերաբար տեղի եյին ունենում ավերումներ, կոտորածներ, տիրոջների փոփոխումներ, ահուկի արշավանքներ, իսկ դրանց հետևանքով՝ արտագաղթեր ե ներգաղթեր, քայքայվեցին համայնքները, ուրեմն ե յեկեղեցական կարգերը: Քահանայության վիճակն ել փոխվեց, նրանց ապրուստի ձևն ել: Կամս թե ակամա՝ քահանաներն իրանց կողմն եյին գրավում հավատացյալների վորոշ խմբեր, առաջացան քահանայական առանձին ծխեր. ուստի ե յուրաքանչյուր քահանա իր կատարած որինակատարությունների տերը հանդիսացավ, իր ձեռքով ստացված հասույթի տերը յեղավ. ուր տեղափոխվում, գաղթում եր ծուխը, նրա հետ չվում եր ե քահանան:

Մեր աչքերի առաջ ավերվեց Հայաստանը, կոտորվեց հայությունը. նրա բեկորները միայն գաղթեցին զանազան կողմեր իրենց քահանաների հետ միասին: Թիֆլիսում ե թե մեր յերկրի զանազան կենտրոններում խմբված կան այդպիսի գաղթականներ. նրանց հետ են ե իրենց քահանաները: Հոգևորապես սրանց դրությունը արգահատելի չե, տնտեսականը ես առավել: Սրանք խորթ

գավառներ են մեր միջավայրում. նրանց քահանաները ահագին խոսքի ու վեճի նյութ են՝ այս կամ այն յեկեղեցին հաճախելու համար: Գաղթական հային աշխատում ենք մեր ծուխ ընդունել, բայց նրա քահանային՝ մեզ հետ իրավատեր յեղրայր չենք ընդունում: Պատճառը այն անորինակ տնտեսական կրիզիսն ե, վորի մեջ ապրում—տանջվում ենք ամենքս:

VIII. Կուսակրոնություն.

Աստվածապաշտության պաշտոնյաների շարքում ես դիտմամբ չ'իշատակեցի կուսակրոնությունը, վորովհետե հա պաշտոնեություն չե, այլ ուխտյալ վանականություն ե սկիզբն ե առել քրիստոնեությունից շատ առաջ, հեթանոսական ծագումն ունի: Աշխարհից ձանձրացած մարդիկ քաշվում յեն վանքերն ու անապատները՝ աղոթքով, ճգնությունով ե գրականությամբ պարապելու համար. քրիստոնեության շրջանում ես աշխարհից ձանձրացած մարդիկ պակաս չեին, նրանք ել իրանց համար ապաստարաններ հիմնեցին, քաշվեցին այնտեղ, վորով առաջ յեկան ե քրիստոնեական վանքեր՝ քրիստոնյա ուխտյալ վանականներով:

Թե հեթանոսություն ե թե քրիստոնեություն մեջ վանական կյանքի ծագումը վորոշ չափով իրենալական բնույթ ե կրում իր մեջ. աշխարհից ձանձրացողների փափազն ե յեղել՝ առանձնություն մեջ գտնել իրենց հոգին ե աստուծուն, սրբալիցի կյանքով փառավորելու աստծու անունը: Բայց անբնական կենցաղը թե հեթանոսական ե թե քրիստոնեական վանքերում շատ շատ ե ցուցադրել իր փեսասկար հետևանքները, գայթակղությունը: Անկարելի չե կարգալ ու չը սոսկալ վանական կյանքի նկարագրությունները:

Աշխարհի ձանձրությունը մենաստաններ-վանքեր ստեղծեց, սակայն զվարճությունն ու մոլությունը ամենից շատ այդ վանքերում պարարտ հող գտան: Այնտեղ, վորտեղ աստծուն եյին ուղում գտնել, աստված անդարձ հեռացավ այնտեղից:

Կարծում եմ, վոչ՝ ամբողջ մարդկությունը այժմ համոզվել ե, վոր վանականությունը վանքից ձանձրացած՝ այժմ աշխարհ պիտի վերադառնա, վոր կարողանա աստծուն գտնել, իր հոգուն գտնել:

Վանք՝ առանց աստծու. վանք՝ առանց հոգու. ե, սի հեղնանք, այժմ այդ վանքի ձեռքին ե գտնվում մեր յեկեղեցու, աստծու տան կառավարությունն ու բարձրագույն իշխանությունը:

Ճշմարիտ է՝ անցյալում կուսակրոնությունը ունեցել է նշանակություն, կատարել է դեր, բայց այդ անցյալումն էր միայն. այժմ մենք ունենք այդ նշանակությունը կորցրած՝ կրոնի համար ֆնասակար ժառանգություն միայն: Պարզ է, վոր կրոնը վերջնական անկումից փրկելու միջոցներից մեկն էլ այն է, վոր վերջ տրվի կուսակրոնությանը—բնական որենքներով ապրող մարդի անբնական կենցաղին՝ յեկեղեցական պաշտոնեյություն ասպարեղում:

Բայց փրկելն ասում է. «են ներքինիք, վոր յորովայն մոր յուրյանց ծնան այնպես» (Մատթ. ԺԺ. 12):

Ուրեմն բնությունը ծնում է և ներքինիներ:

«Յեվ են ներքինիք, շարունակում է փրկիչը, վոր զանձինս յուրյանց արարին ներքինիս՝ վասն արքայության յերկնից»:

Արդարե՞լ յերկնքի արքայության համար, ասածուն զտնելու համար, մարդիկ կարողացել են յաղթահարել բնության վերոջ որենքը և իրենց անձը նվիրել են վանական առանձնակեցության:

Սակայն այդպիսի բացառությունները դաս ստեղծել չեն կարող. այդպիսիները չեն ևլ համաձայնվիլ աշխարհ վերադառնալ՝ աշխարհ կառավարելու համար: Բայց յեթե կրգտնվին այդպիսիներն ևլ, աշխարհին հաճելի բացառություններ, այդ պիտի համարել բնական որենքին գիմելու անկեղծ ձգտումն, հետևաբար և պիտք է յարդել:

Ս. Եջմիածնի հոգևորական համագումարը ցանկություն է հայտնել՝ կուսակրոնության խնդրի լուծումը թողնել իրան՝ կուսակրոնությանը: Մյուս յերկու բանաձևերը՝ ա. կուսակրոնությունը վերացնել և բ. կուսակրոնությունը պահպանել և վերակենդանացնել չեն անցել: Մեր ձեռքի տակ չկան համագումարի արձանագրությունները, վոր կարողանայինք մեզ համար պարզել, թե ինչպես պիտք է լուծի ինքը—կուսակրոնությունը իր սեփական ինչիքը: Թողնել, վոր ինքն իրան վերակենդանացնի, վոր միանգամայն անհնարին է, թե՞ թողնել, վոր ինքն իրեն վերջանա բնական մահով:

Յեկեղեցին այդպիսի կասկածելի եքսպերիմենտի յենթարկել, կը նշանակե այնպիսի հոգևոր-բարոյական ավերածություն առաջ բերել, վոր անհնարին կը լինի նորից վերաշինել: Այսպես թե այնպես՝ այս բանաձևը մեզ հրամցնող հոգևորականների համագումարը հաստատում է այն համառ հասկացողությունը, վոր յեկեղեցին հոգևորականության իմա՝ կուսակրոնության սեփական-

նությունն է և ինչ փորձեր ու եքսպերիմենտներ կամենա, կարող է կատարել յեկեղեցու հաշվին:

Այսպիսի հասկացողությունը կատարյալ մոլորություն է, յեթե ավելին չասենք: Յեկեղեցին ժողովրդինն է, հոգևորականությունը նրա պաշտոնյան, ժողովուրդն էլ պիտի տնորինե, կարգադրե, վերջնական լուծում տա իր յեկեղեցուն վերաբերյալ բոլոր ինչիքներին:

IX. Յեկեղեցական համայնք, թեմ յեվ համագալիս յեկեղեցի:

ա. Պորհրդային իշխանությունը իր պատմական դեկրետով պետությունից բաժանեց յեկեղեցին, դարոցն ևլ յեկեղեցուց. միևնույն ժամանակ յեկեղեցին՝ իր ամեն տեսակ շարժական ու անշարժ գույքով ու կալքով հայտարարեց պետական սեփականություն տեղերի գործադիր կոմիտեներին հալոցության տակ: Միևնույն դեկրետով Պորհրդային իշխանությունը խղճի կատարյալ ազատություն շնորհեց իր ընդարձակ պետությունը կազմող բոլոր ժողովուրդներին: Կրոնը լինելով խղճի, զգացմունքի, սրտի գործ՝ ամեն մարդի կատարյալ ազատություն է տրվել՝ դավանել վորև կրոն, կամ իսպառ չդավանել: Յեվ վերովհետև պետության մեջ կան տարբեր կրոններ և մեկը մյուսից հեռու, կամ մոտիկ դավանություններ, և դրանցից յուրաքանչյուրը իր հասարակաց աղոթքի համար ուներ իր յեկեղեցին, պետությունը թույլ տվեց այդ՝ միևնույն կրոնին ու դավանությանը պատկանող, այս կամ այն յեկեղեցու շուրջը խմբված հավատացյալներին՝ ձրիարար ոգտվիլ յեկեղեցուց և աստվածաշատության համար անհրաժեշտ իրերից: Հավատացյալների այդ խմբավորումները կոչեց յեկեղեցական համայնք, ձիշտ այնպես. ինչպես հնումն էր, իսկ այժմ կոչվում է ծովս:

Այս համայնքները իշխանության առաջ համարվում են տեր և տնորեն իր յեկեղեցու. այդ համայնքներին է պատկանում՝ ի դեմս դրանց գործադիր մարմին՝ ծխական-յեկեղեցան խորհուրդների՝ յեկեղեցու տնտեսական, վարչական և դատաստանական ֆունկցիաները: Այսպես էր և նախնական յեկեղեցու իրավակարգը: Ուրեմն մենք ամեն կերպ պիտի պահպանենք այդ վարչաձևը: Այս իմաստով ևլ հաստատված է նոր կանոնադրություն—устав—վոր լրիվ չե սակայն, մնում է միայն նույն վոգով և ուղղությամբ

ընդարձակել, լրացնել և համայնքի, ծխական խորհրդի և յեկեղեցու պաշտոնյաների իրավունքներն ու պարտավորությունները, նրանց փոխ-հարաբերությունները թեմական-յեկեղեցական խորհրդի և թեմական առաջնորդի հետ պարզել, թյուրիմացությունների առաջն առնել, վոր կենդանի գործ ունենանք, վոր այդ կենդանի գործը թյուրիմացությունների, զանազան վտանգությունների զոհ չգնա:

Համայնքի գործադիր մարմինը՝ ծխական խորհուրդը ընտրվում է մեկ տարով և բաղկացած է չորս անդամից և յերեղեցու ավագ յերեցից:

Ը. Այն ընդարձակ շրջանը, վորը իր մեջ ունի բազմաթիվ յեկեղեցիներ ու համայնքներ և այդ փոքրիկ ինքնավար միությունները միմյանց հետ կապում — շաղկապում է, նրանց գործունեությունը մի հայտարարի յե բերում՝ առաքելական վոգով, հորդորներով, սիրո քարոզներով, հսկում և թույլ չե տալիս վոչ վորի անցնել որեւի սահմաններից, կոչվում է թեմ, վոր կառավարվում է թեմական պատգամավորական ժողովի մշակած իրավակարգով՝ իր գործադիր մարմին՝ թեմական-յեկեղեցական խորհրդի միջոցով, առանց սակայն ժխտելու համայնքների ինքնավար սկզբունքը:

Փափուկ է դրությունը, փափուկ է և այն կապը, վոր միացնելու է ինքնավար համայնքներին թեմական-յեկեղեցական խորհրդի և թեմական առաջնորդի հետ. փափուկ է և ալը մարմինների փոխհարաբերություն՝ ըստ յերեկոյթին շատ պարզ, բայց ըստ եյություն շատ բարդ խնդիրը, վորին սխալ կամ անզգուշ մոտենալը յղի յե վոչ ցանկալի, նույն իսկ քնասակար հետևանքներով:

Յեւ արդարև՝ համայնքները անկախ ինքնավար մարմիններ են, բայց միմյանց հետ և բոլորը միասին՝ կապված պիտի լինին թեմական յեկեղեցական խորհրդի հետ, իսկ թեմական խորհուրդների և առաջնորդների միջոցով՝ մայր աթոռ ս. Եջմիածնի հետ՝ յեկեղեցու միությունը պահպանելու համար:

Գ. Համազգային յեկեղեցի՝ մայր աթոռ ս. Եջմիածին կենտրոնով, վոր կազմում է՝ աշխարհիս ամեն կողմ ցրված, տարբեր լեզուներով ու բարբառներով խոսող, տարբեր իրավակարգի տակ, տարբեր սովորություններով ապրող ու տարբեր նիստ ու կաց ունեցող բոլոր հայերի զգացմունքների և հոգևոր ապրումների ֆոկլոր — ձգողական ուժով:

Վորևե որեւի չե տվել մայր աթոռ ս. Եջմիածնին այդ՝ համազգային մեծ՝ նվիրական նշանակությունը, վոչ էլ եջմիածնական միահեծանություն տենչը, վոչ. այլ՝ հայի պատմության բազմազան ու բազմագույն, սակավ ուրախ, բայց միշտ տխուր, վողբերգական յեկեղեցիներ և դրանց մեջ ու դրանց հանդեպ ս. Եջմիածնի յերբեմնի խաղացած առաքելական-հայրական դերը. վոչ թե նրա հրամանները, այլ հայրական սրտից քոխած հորդորներն ու ներշնչումներն են հայի ուշն ու սիրտը կապել մայր աթոռի հետ, ստեղծել — կռել-կռիել նրա անորինակ հմայքը:

Կամենում եք վերականգնել, վերաստեղծել ս. Եջմիածնի նախկին՝ պատմական հմայքը, տվեք նրան նախնի առաքելական վիճակը, վերացրեք այնտեղից միահեծանություն տենչը, գաղափարը, ինստիտուտը. կազմեցեք այնտեղ վոչ թե իշխողների, հրամայողների, անսխալականների՝ անմեքենալի ահարկու ատյան, վոչ, այլ՝ իր զավակների ուրախությամբ ուրախացող, իր հոտի ցավներով տանջվող հայերի տուն, իր զավակներից վոչնչով չտարբերվող ծնողների ոջաղ, առաքելական կայան, աշխատանք սիրող, աշխատանք նվիրագործող միջավայր: Պատվաստեցեք այնտեղ այն պարզ, այն ցանկալի գաղափարը, վոր՝ յեկեղեցին, ինքը — ժողովուրդն է, վոր՝ ժողովուրդը՝ ինքը — յեկեղեցին է, իսկ իրենք՝ այդ յեկեղեցու, . այդ ժողովրդի սպասավորներն յեն և վոչ թե հրամայողներն ու իշխողները:

Հոգևոր իշխանություն. հոգևոր պետություն, կամ ինչպես իգեալացնում են՝ հոգևոր նվիրապետություն. սա մի սոսկալի հակասություն է, ժխտումն է առաքելական համայնականություն:

Հոգևոր յեղբայրություն. հոգևոր կառավարություն. ահա այս է ճշմարիտ արտահայտությունը ավետարանական վոգու, ավետարանական — փրկչական ընտանություն:

Պարզ է, ուրեմն, վոր թեմերը՝ իրենց ինքնավար համայնքներով կապվում են և պիտի կապվին իրենց մայր աթոռ ս. Եջմիածնի հետ՝ վոչ ստորադասություն, կամ ստորադրելիություն վիճակում, այլ ինքնավարական՝ ազատ, անկաշկանդ միացումով, ինչպես սիրող վորդիքը՝ սիրող հոր հետ:

Համազգային յեկեղեցին՝ համայն հայոց թեմերի կենտրոնը՝ ս. Եջմիածին է ի դեմս գերագույն հոգևոր խորհրդի՝ ամենայն հայոց կաթողիկոսի նախագահությամբ.

Ինքնավար՝ անկախ թեմերի ներկայացուցիչների ժողովը, համազգային յեկեղեցական ժողովը՝ ընտրում է գերագույն հոգևոր

խորհուրդը և նրա նախագահին՝ ամենայն հանոց կաթողիկոս տիտղոսով: Գերագույն հոգ. խորհուրդը և նրա նախագահ կաթողիկոսը նույն դերն են ստանձնում համազգային յեկեղեցական համայնքների կառավարության գործում, ինչպես թեմական յեկեղեցական խորհուրդը թեմի յեկեղեցիների և համայնքների կառավարության գործում:

Ամենայն նախաձեռնություն՝ յեկեղեցին կառավարելու, տնտեսությունը վարելու, պաշտոնյաներ ընտրելու, հեռացնելու, վարձատրելու, պատժելու՝ պատկանում և համայնքներին, նրանց միություն՝ թեմական պատգամավորական ժողովներին և թեմերի ներկայացուցիչներին՝ պատգամավորական-համազգային-յեկեղեցական ժողովներին. իսկ ծխական յեկեղեցական, թեմական-յեկեղեցական խորհուրդները և գերագույն հոգևոր խորհուրդը՝ սրանց գործադիր մարմիններն են:

X. Յեկեղեցական դիսցիպլինա-սահմանադրություն.

Համայնքները, նրանց գործադիր մարմին ծխական խորհուրդները, թեմական-յեկեղեցական խորհուրդները, գերագույն հոգևոր խորհուրդը և ամենայն հանոց կաթողիկոսը ունին իրենց իրավունքները և դրանց հանդեպ իրենց պարտավորությունները: Թվել այդ իրավունքները և պարտավորությունները, իրավունքի սահմանից դուրս գալը, պարտավորությունների մեջ թերանալը ուղղում և լինի—համայնք, ծխական-յեկեղեցական խորհուրդ, թեմական յեկեղեցական խորհուրդ, գերագույն հոգևոր խորհուրդ թե ամենայն հանոց կաթողիկոս, յեկեղեցու ամեն կարգի պաշտոնյաներ, միևնույն և, վոչ վոք իրեն թույլ չպիտի տա վոչ իրավազանցություն և վոչ պարտազանցություն:

Եւր յեկեղեցին, վոր դարերի կյանք ունի, չունի սակայն՝ իր կյանքը, գործունեությունը սահմանող մանրամասն որենք — սահմանադրություն: Դրա համար եւ տուժել և, տուժում և ցայտոր: Պարզ, մեկին որենքի բացակայություն և ծնում անարխիա, անխիստություն և բացարձակ կամայականություն մեկ կողմից, սանձարձակ ըմբոստություն, անհնազանդություն, կամազուրկ ստրկություն՝ մյուս կողմից: Անհրաժեշտ և անհապաղ ընտրել ձեռնհաս մասնաժողով՝ հոգևորական և աշխարհական գիտակ անձերից, վոր իսկույն գործի անցնեն և կազմեն հանոց յեկեղեցական որենք — սահմանադրություն, վոր ներկայացվի առաջիկա

համազգային յեկեղեցական որենքի ժողովին, վորը անհետաձգելիորեն պիտի հրավիրվի յեկող 1926 թ. ընթացքում:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ Ն

1. Ամբողջ աստվածաշատությունը՝ աշխարհիկ լեզվով.

Ծանոթություն 1. Այսպես ընդունել և և Թիֆլիսի 1917 թ. պատգամավորական ժողովը, իսկ Եջմիածնի՝ նույն թվի հոգևորականների համագումարը ընդունել և՛ բացի շարականներից և պատարագի արարողությունից:

2. Հնարավոր կրճատումն աստվածաշատության կարգի մեջ: Լուր որերի ժամասացությունը բոլորովին վերացնել, թողնելով շարաթ յերեկոյան բարեփոխված ժամասացությունը, կցելով կիրակի առավոտյան բարեփոխված ժամասացությունը: Ույժ տալ յերգին, յերաժշտությանը և ավետարանական քարոզին՝ սիրո, հավասարության և ընդհանուր յեղբայրության մասին՝ առանց խտրության ազգությունների և թե ինչ կրոնի ու դավանության յին պատկանում նրանք:

Ծանոթություն 2. ա. Աստվածաշատության կարգի կրճատումն և յերգին ու յերաժշտությանը ույժ տալը և տիրապետող ավետարանական կենդանի խոսքը ընդունել են վերոհիշյալ յերկու ժողովներն եւ (ծանոթ. 1.), առանց մանրամասնության մեջ մանելու:

3. Վերացնել սրբոց և նրանց մասունքների պաշտամունքը և ամեն տեսակ մահափառություն ծեսերը, թվով 15, վորպես հակառակ ավետարանական վոգուն:

Ծանոթություն 3. ա. Յերկու ժողովներն եւ, առանց մասնավորելու, նույն պահանջներն են դնում:

բ. Նախնական յեկեղեցու ընդունված սրբոց հարգանքը, կյանքը դարձրել և պաշտամունք, վերականգնել նախնական հարգանքը՝ այժմ անհնար ե:

գ. Յեկեղեցին ունի առանձին հարգանքի արժանի սուրբեր, վորոնց տոնակատարությունը, առանց հատուկ ժամասացության, մնում ե:

4. Քահանան վորպես քաղաքացի, և առհասարակ ամեն կարգի և աստիճանի հոգևորականը, պաշտոնից ազատ ժամերում, կրում է քաղաքացիական տարազ և պարապում է քաղաքացու ամեն տեսակ գործերով ու արհեստներով:

5. Հոգևոր պաշտոնյաները ընտրվում են վորոշ ժամանակով, սկսած քահանայից մինչև կաթողիկոսը, վորպեսզի անհամապատասխան, նույնիսկ անպետք պաշտոնյան պատիժ չլինի յեկեղեցու և ազգի համար:

6. Քահանան միայն ձեռնադրվում է. ոճումը կրկնամկրտություն լինելով՝ թույլատրելի չէ քրիստ. յեկեղեցու դավանած սկզբունքով: Իսկ յեպիսկոպոսը և կաթողիկոսը նույն իսկ չեն ձեռնադրվում, այլ ընտրությունից հետո հաստատվում են իրանց պաշտոնի մեջ: Բայց յերբ յեպիսկոպոսը կամ կաթողիկոսը ընտրվում են աշխարհականներից, քահանայական ձեռնադրությամբ հաստատվում են պաշտոնի մեջ:

7. Կուսակրոնությունը, վորպես պարտադիր իշխանության դասակարգ՝ վերանում է. ժողովրդավարական յեկեղեցու պաշտոնյան ժողովրդական պետք և լինի: Ամուրիությունը, ինչպես և ամուսնավորությունը պարտավորական չպետք լինի հոգևոր պաշտոնյայի համար, ինչպես և և աշխարհիկ քաղաքացու համար. յերբ կը կամենա, կամուսնանա, այդպիսի պահանջ չի դրալ, չի ամուսնանալ, սակայն անբնական կենցաղ իրեն թույլ չպիտի տա, հակառակ դեպքում՝ կամ պետք է հեռանա ասպարեզից, կամ ամուսնանա:

Հոգևորական կոչումն ընդունողից չպետք է հարցնել՝ ամուսնացած է թե՞ վոչ:

Ծանոթություն 5. Եջմիածնի համագումարը այս խընդիրը չի շոշափել, իսկ Թիֆլիսի համագումարը ընդունել է:

8. Ուխտյալ վանականությունը թույլատրելի է, միայն պատական ըմբռնմամբ, այն է՝ վանքի մեջ կենցաղով մարմնացնող քրիստոնեական դավապարը, իսկ դրսում՝ քարոզող քրիստոսի ավետարանը:

Ծանոթություն 6. Եջմիածնի համագումարը այս բանաձևին համաձայն է:

9. Հայոց յեկեղեցին ժողովրդավարական է, իսկ Եջմիածնի համագումարը ցանկություն է հայտնել պահպանել նվիրապետությունը:

10. Յեկեղեցու ծխական խորհուրդը, վոր ընտրվում է մեկ տարով՝ վորպես գործադիր մարմին համայնքի, վարում է յեկեղեցու բոլոր գործերը — անտեսական, վարչական և դատաստանական՝ թեմական յեկեղեցական խորհրդի հսկողության տակ:

11. Թեմական-յեկեղեցական խորհուրդը ընտրվում է յերեք տարով, բաղկացած է վեց անդամից — յերեք հոգևորական և յերեք աշխարհական, և չորս անձնավորությանորդներից — յերկու հոգևորական և յերկու աշխարհական և պաշտոն ունի վերահսկել՝ համայնքների ու ծխական խորհուրդների գործունեության վրա՝ ընդունված կանոնադրության սահմաններում: Ծխական ժողովներում ներկա չե լինում թեմական-յեկեղեցական խորհրդի անդամը՝ միմիայն դիտողի և ողենք բացադրողի գերում:

12. Թեմական առաջնորդը ևս ընտրվում է թեմական պատգամավորական ժողովից՝ յերեք տարով, նախագահում է թեմ.-յեկեղ. խորհուրդին և գործադրում ենքա վորոշումները, ինչպես՝ քահանայի ձեռնադրությունը, հաստատությունը, նրանց՝ պաշտոնից հեռացնելը, կոչումից զրկելը, պարգևատրելը և այլն, հիմք ունենալով ծխական համայնքների վորոշումները: Առաջնորդի բոլոր պաշտոնական գրությունների տակ, բացի հովվական գրություններից, առաջնորդից հետո ստորագրում է խորհրդի նախանդամը, վոր առաջնորդական տեղապահ, կամ ոգնական կոչումն ունի՝ թեմական պատգամավորական ժողովի կողմից: Այնպես և առաջնորդի պաշտոնական այցելությունների ժամանակ ուղեկցում և ընդունելությունների ժամանակ ներկա չե լինում:

13. Գերագույն խորհուրդը ընտրվում է համազգային յեկեղեցական ժողովից՝ չորս տարով և բաղկացած է վեց անդամից — յերեք հոգևորական և յերեք աշխարհական. հոգևորականներից առնվազն մեկը պետք է լինի քահանա, աշխարհականներից՝ առնվազն մեկը՝ իրավաբան, և չորս անձնավորությանորդներ՝ 2-ը հոգևորական, 2-ը աշխարհական: Գերագույն հոգևոր խորհուրդը գտնվում է Հայաստանի մայրաքաղաքում և պաշտոն ունի հսկել թեմական յեկեղեցական խորհուրդների և առաջնորդների գործունեության վրա, և ուղղություն տալ նրանց գործունեությանը ընդունված կանոնադրության սահմաններում:

14. Թե՞ թեմական յեկեղեցական խորհուրդների և թե՞ գերագույն հոգևոր խորհրդին կից ընտրվում են վերաստուգիչ հանձնաժողովներ՝ բաղկացած յերեք անդամից՝ մեկ հոգևորական և յերկու աշխարհական:

15. Ամենայն հայոց կաթողիկոսը ևս ընտրվում է համադրային յեկեղեցական ժողովից ութ տարով: Նրա անձնախոսանորդն է գերագույն հոգ. խորհրդի նախագահամը՝ հայրապետական տեղապահ անունով, վոր նույնպես ընտրվում է համադրային յեկեղեցական ժողովից ութ տարով: Ամենայն հայոց կաթողիկոսը անձամբ նախագահում է գերագույն հոգ. խորհրդին և հանդիսանում է նրա գործադիր անդամը. այն է՝ հաստատում է առաջնորդներին իրանց պաշտոնների մեջ, հեռացնում է նրանց պաշտոնից, պարգևատրում է, կարգադրել է անում և այլն: Գերագույն հոգ. խորհուրդը այդպիսի վորոշումները հիմնում է թեմական յեկեղեցական խորհուրդներին և թեմական պատգամավորական ժողովների վորոշումների վրա: Զուտ կրոնական խնդիրների նկատմամբ ամենայն հայոց կաթողիկոսը որոշում է վճռական ձայնի իրավունքով:

16. Ամենայն հայոց կաթողիկոսը անհրաժեշտորեն պիտի ունենա պատշաճ բնակարան և Հայաստանի մայրաքաղաքում և ս. Եջմիածնում, վորտեղ պիտի կատարվեն՝ մեծոքորհները, ս. Եջմիածնի հետ կապ ունեցող բոլոր տոներն ու հանգստերը, մանավանդ համադրային յեկեղեցական ժողովները:

17. Յեկեղեցու պաշտոնեությունը — սրբազնագործ պաշտոնը կատարում է ձրի, ուժիկ ստանում է յեկեղեցուց վորոշ կատեգորիաներով՝ ըստ ավագության և համաձայն վարած պաշտոնի: Համայնքը յեկեղեցուն տալիս է կամավոր տուրք՝ յեկեղեցու և պաշտոնեության պահպանության համար:

18. Անհետաձգելի պարտականություն է՝ դադթական հայերին ընդունել իրենց բնակության տեղի համայնքների մեջ և նրանց քահանաներին՝ այդ համայնքների միաբանություն անդամ:

19. Թեմի գյուղերի վրա ձեռնադրված քահանաներին ամենակտրուկ կերպով հեռացնել իրանց ընտրող համայնքների մոտ, իսկ մերձակա գյուղերի քահանաներին արգելել ապրել Թիֆլիսում և հովվել ծուխ:

20. Յեթե Թիֆլիսի փակ յեկեղեցիները չբացվին, նրանց քահանաներին իրենց ծխերով միացնել գոյություն ունեցող յեկեղեցիների հետ՝ սրանց միաբանություն և ծխական խորհուրդների համաձայնությամբ. առաջին նվազ այն յեկեղեցիների հետ միացնել, վորոնք մի—մի քահանա ունեն:

21. Յեթե այս փակված յեկեղեցիները մինչև առաջիկա պատգամավորական ժողով դումարվիլը բացված չլինեն, այդ հա-

մայնքները համարել լուծված և առանձին պատգամավոր ունենալու և ընտրելու իրավունքից զրկել:

22. Վերջ տալ սպեկուլացիայով պարասյող քահանաների անպատվաբեր արհեստին ու ժողովրդի դաշթակղությունը վերջ դնել:

23. Այն քահանան, վոր յեկեղեցում չէ պաշտոնավարում, հերթապահություն չէ անում, այլ մի կողմ քաշված առանձին տնտեսություն է դրադվում, ծխից հեռացած համարել և ծուխը բաժանել պաշտոնավարող քահանաների մեջ:

24. Ամուսնական խնդրում — հասի և չհասի վերաբերյալ՝ անհրաժեշտ է, վոր յեկեղեցին համաձայնություն գա զազաի ընդունած որոշի հետ. մենք չենք կարող, իրավունք չունենք ապօրինի համարել պետական սրենքով որինավոր ճանաչված ամուսնությունը:

25. Յեկեղեցիները պետք է ունենան արձանագրական մատյաններ՝ մասնավոր բնույթով՝ ամենատեսակ որինակատարությունների համար և տալ վկայականներ չունեցողներին, ավագ քահանայի ստորագրությամբ, դարձյալ մասնավոր բնույթով:

26. Յեկեղեցու բոլոր պաշտոնյաներին արձակուրդ տալիս է ծխական յեկեղեցական խորհուրդը՝ նախագահի ստորագրությամբ, ամեն անգամ տեղեկություն տալով թեմական յեկեղեցական խորհրդին:

27. Հայոց յեկեղեցին՝ բոլոր վերոգրյալների իմաստով և ուղղությամբ, առանց սակայն հակասելու խորհրդային միություն սահմանադրության վորդուն, բայց և համապատասխան հայոց առաքելական յեկեղեցու սկզբունքներին և վորդուն, անհրաժեշտորեն պետք է ունենա՝ ծխական համայնքների, ծխական յեկեղեցական, թեմական պատգամավորական և համադրային պատգամավորական ժողովների, այլ և՛ գերագույն հոգ. խորհրդի, վերաստուգիչ հանձնաժողովների և ամենայն հայոց կաթողիկոսի գործունեությունը պարփակող մանրամասն՝ ընտրական, տնտեսական, վարչական, քննական, իրավական, դատաստանական որոշք — սահմանադրություն:

Այդ սահմանադրության մեջ առանձին տեղ պիտի գրավեն՝ ա. Պահանայացուներ պատրաստելու միջոցները և ծրագրերը. բ. Ի՞նչ և քահանայի պաշտոնը, նրա պարտավորությունները և իրավունքները:

գ. Վերադարձի գործունեություն համար ի՞նչ կարգի վարձատրություն պիտի ստանա և ի՞նչ կարգով.

դ. Վերադարձի թերութեան, զանցառութեան և հանցագործութեան համար՝ նկատողութեան, հանդիմանութեան, տուգանքի արժանանա և պաշտոնից ու կոչումից զրկվի:

յե. Այսպես և յեկեղեցու ամբողջ պաշտոնեյութեան՝ յեպիսկոպոսի և կաթողիկոսի համար.

զ. Վանական կյանքը իր բոլոր պարագաներով և ուխտյալ վանականութեան ելութիւնը, վիճակը, տնտեսութիւնը և աշխարհիկ հոգևորականութեան շարքը վերադառնալու հնարավորութիւնը:

28. Յանկալի և ոգտակար համարելով յեկեղեցու ամեն կարգի աշխատանքների միացյալ՝ անկախ աշխատանքը՝ յեկեղեցին բարեփոխելու, կենդանացնելու, առաքելական դարերի պարզութեանը մոտեցնելու խնդրում՝ հաստատվում է այդ աշխատավորների միութեան կանոնադրութիւնը:

Զեկուցումիցս հետո հայ իրականութեան մեջ առաջ յեկաւ «Ազատ յեկեղեցական յեղբայրութիւն» իր ուրույն կանոնադրութեամբ, վորով ձգտում և վերականգնել հայոց յեկեղեցու հնագույն համայնական վիճակը, մոտեցնելով նրան առաքելական դարերի պարզութեանը: Յեղբայրութիւնը հաջող գործում և Հայաստանում և Վրաստանում. ունի բազմաթիւ համակրողներ և հետևողներ ամենուրեք ցրված հայութեան մեջ: Այս պատճառով ավելորդ համարեցի հրատարակել իմ կողմած «Հայոց յեկեղեցու աշխատավորների միութիւն» կանոնադրութիւնը:

Ստեղծված պատմական պայմանների բերումով եղմիւսմի հոգևոր գերագույն խորհուրդը իբր թե իր վրա յե վերցրել յեկեղեցու բարեփոխութեան նախաձեռնութիւնը, սակայն միայն խոսքով, իսկ գործնականում շարունակ արգելքներ և հարուցանում բարեփոխութեան իրականացման դեմ և անողոր պայքար և մղում բարեփոխութեան անկեղծ կողմնակիցների դեմ: Գերագույն հոգեվոր խորհրդի այս յերկդիմի քաղաքականութեան պատճառով ազատ յեկեղեցական յեղբայրութիւնը ստիպված իր վրա յե վերցրել բարեփոխութեան նախաձեռնութիւնը և այն հիման վրա համառ պայքար սկսել յեկեղեցու հակահեղափոխական գլխավորների դեմ, վորոնց գործունեութեան մասին յեկեղեցու բարեփոխութեան նկատմամբ՝ մենք կխոսենք մեր առաջիկա աշխատութեան մեջ:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎԸ

«Պատգամավորական ժողովը՝ լսելով բարենորոգութեան շուրջը կատարված զեկուցումները՝ սկզբունքով ընդունելով բարենորոգութեան անհրաժեշտութիւնը և ցանկանալով պարզել թեմի հայ ժողովրդի ցանկութիւնը նրա ծավալի հափի մասին՝ վորոշեց ընտրել մի հանձնաժողով զիտակ անձերից, վոր կազմե բարեփոխութեան հարցացուցակ և թեմական խորհրդի միջոցով քննութեան յենթարկե թեմի բոլոր յեկեղեցական համայնքներում և ապա նյութերը՝ մի ընդհանուր ամփոփմամբ՝ ուղարկի գերագույն խորհրդին իբրև նյութ ազգային յեկեղեցական ժողովի վրձնահատութեանը ներկայացնելու համար, իսկ տեղական բարեփոխութեան և բարեղարդութեան ընույթ կրող խնդիրները գործադրել կյանքի մեջ. պատգամավորական ժողովը միաձայն (ընդդեմ մեկի) վորոշեց հանձնարարել թեմական խորհրդին ի կատար ածել:

Նիստ. Ը 12 հոկտ. 1925 թ.
Թիֆլիս



ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Ներկա աշխատությունը տպագրվում էր, յերբ անսպասելի կերպով նրա հեղինակ Հովսեփ ավագ քահանա Տեր-Պետրոսյանը կարճատև հիվանդությունից հետո՝ վախճանվեց:

Նա չը տեսավ իր տպագրված աշխատությունը և իր յերազած՝ յեկեղեցական բարեփոխության իրագործումը: Նա համոզված բարեփոխական էր և Վրաստանի հայ «Ազատ Յեկեղեցական Յեղբայրության» անդամ: Նա միևնույն ժամանակ ներկայանում էր վիրահայ քահանայության ամենակրթված և խելոք անդամը:

Հանգուցյալ Տեր-Պետրոսյանի թաղումը կատարվեց 1927 թ. հունվարի 23-ին Քամոյան յեկեղեցուց, վորի ավագ յերեցն էր նա, Վերայի յեկեղեցու գավթում՝ մեծ շուքով և յերաժշտությամբ: Նրա թաղմանը մասնակցում էր վրաց հոգևորականության ներկայացուցչությունը, Յերևանից եկած հոգևորականության ներկայացուցչությունը՝ հանձինս Ներսես ավագ քահանա Քաջբերունու, Բենիկ ծայրագույն վարդապետի և Իգնատիոս քահանա Տեր-Մովսիսյանի ու Թիֆլիսաբնակ հազարավոր բաղմություն: Բացակայում էր Թիֆլիսի հայ հոգևորականությունը, վորպիսի հանգամանքը հայ ժողովրդի և հարևան ազգերի աչքում վերջնականապես այն համոզումը առաջ բերին, վոր Թիֆլիսի ժամանակակից հայ քահանայությունը առաջին թշնամին և մեր յեկեղեցու, նրա մեջ քրիստոնեություն չկա և նա իր վաքը ու բարքով՝ իսկապես վոր մեր յեկեղեցին դեպի կործանումն և տանում: Այս հանգամանքը լեփ լեցուն յեկեղեցում՝ իրենց դամբանականների և արտասանած ճառերի մեջ ցայտուն կերպով ապացուցեցին վրաց քահանա Պամբեկեղին, Բենիկ ծ. վարդապետը, Ներսես ավ. քահանա Քաջբերունին և Վրաստանի «Ազատ Յեկեղեցական Յեղբայրության» նախագահ՝ Հակոբ Տեր-Հարությունյանը: Խուռն ժողովուրդը իր արդար զայրույթը արտահայտեց Թիֆլիսի հայ քահանայությունը, նրա պղծիկի վերաբերմունքի առթիվ:

Թաղման ամբողջ ծախքը հոգաց Վրաստանի «Ազատ Յեկեղ. Յեղբայրությունը»:

.....



Վրաստանի «Ազատ Յեկեղեցական Յեղրայություն» հրա-
սարակություններ՝

№ 1. «Մեր նպատակը»	Գինը 20 Կ.
№ 2. «Կործանվող Յեկեղեցի»	» 15 »
№ 3. «Յեկեղեցական Բարեփոխութուն»	» 30 »

